Միության ժամանակն ու նշանը

Բարի երեկո։ Ինձ համար առանձնաշնորհում է այս երեկո լինել այստեղ և գտնվել այս վայրում։

2 Այս առավոտ երբ ճանապարհով վարելիս… աղոթում էի՝ սպասելով Տիրոջը։ Ճանապարհին միացրի ռադիոն և լսեցի մի սևամորթ ծառայողի՝ Սմիթ եղբորը (Որև է մեկը լսե՞լ է նրան այս առավոտյան։ Որևէ մեկը լսած կա՞)։ Կարծում եմ, որ Օհայոյի կայաններից մեկն էր։ Ինչ–որ մեկն ինձ ասել էր նրա քարոզի մասին և ասել. «Անպայման լսեք այն»։

3 Ես հենց այս առավոտ լսել եմ։ Նա խոսում էր այն մասին, թե ինչպես է մեղքը շատացել այսօր աշխարհում, և նա… Հետո մի քիչ էլ պտտեցի, մեկ այլ կայան, և մեկ ուրիշ հաղորդում լսեցի։ Այս առավոտ այստեղ գալիս մտածում էի, թե արդյոք արդեն շատ ուշ չէ եկեղեցի գալու համար։ Ուստի մեզ համար իսկապես առանձնաշնոհում է տրված՝ այս երեկո լինել այստեղ և ծառայել Տիրոջը։

4 Վերջերս Նևիլ եղբոր և պատգամի մասին էի խոսում այս կնոջ՝ մեր քրոջ հետ, որը հեռացավ մեզանից։ Դա, բոլորս էլ ճանաչում ենք նրան, դա Ուիվեր քույրն է։ Եվ խորհելով այն մարդու մասին, որ այս երեկո մկրտվեց այստեղ, այս կինը… Ես նրան մկրտեցի այս ավազանում, երբ ես… նրան այստեղ անվասայլակով պիտի բերեին։ Նա մահանում էր քաղցկեղից, և գիշերը չէր լուսացնելու։ Բժիշկները հրաժարվել էին նրանից, հաջորդ առավոտ նա մեռնելու էր։ Ես գնացի նրա տուն և փորձեցի խոսել նրա հետ աստվածային բժշկության մասին, բայց նա շարունակ կրկնում էր. «Ես արժանի չեմ, որ իմ հարկի տակ մտնեք»։ Նա ասաց. «Ես, ես արժանի չեմ ծառայողին ընդունելու իմ տանը»։ Նա ասաց. «Ես մեղավոր կին եմ»։ Բայց ասաց. «Պարո՛ն, ես չեմ ուզում այսպես մեռնել»։ Դրա համար Գրեյս Ուիբերն ինձ տարավ այնտեղ։ Ես գնացի նրա տուն, հավաքույթից հետո, հոգնած։ Եվ երբ ես աղոթում էի նրա համար և կարդում էի Սուրբ Գիրքը, նա փրկվեց։ Այդ պահին նա հազիվ էր կարողանում ձեռքը բարձրացնել, բայց ուզում էր սեղմել բոլորի ձեռքը։ Նա

ուղղակի… ինչ-որ բան էր կատարվել իր հետ։

5 Եվ մինչ նրանք սեղմում էին ձեռքերը, ես տեսիլք տեսա, թե ինչպես էր նա գնում հավաբուն և վերադառնում։ Ես ասացի. «Հիմա ամեն ինչ լավ կլինի»։ Եվ դա եղել է տասնութ տարի առաջ։ Նա այդքան ժամանակ հաղթահարել էր քաղցկեղը։ Եթե նա մահացել է… Նա քաղցկեղից չի մահացել, այլ սրտի նոպա է ունեցել և դա է սպանել նրան։ Նրան դրել էին թթվածնի տակ, նա սրտի նոպայից մահացավ։

6 Հետո, ես մտածում էի, երբ մարդիկ դուրս էին գալիս, *«Այնժամ Հիսուսը եկավ»* երգը երգելուց հետո։ Հենց դա էլ կատարվել էր։ Նա եկել էր և խնայել նրա կյանքը այդ տասնութ տարիների ընթացքում։ Եվ ես մտածեցի. «Ինչ տեղին էր»։ Այդ կինը, հավանաբար, չգիտեր, թե ինչ էր անում, իսկ գուցե մտածված էր այդ արել։ Բայց ուղղակի *«Այնժամ Հիսուսը եկավ»* երգի այդ մասը շատ տեղին էր։

7 Շուտով կսկսվի իմ մեծ հավաքույթների շարքը։ Իսկապես նյարդային եմ դառնում։ Այս առավոտ այնքան ուժասպառ էի, գնացի աղոթելու։ Եվ ես, ես հիմա վերադարձել եմ տուն։ Ընտանիքիս տարա Արիզոնա, և ինքս… որ երեխաները դպրոց գնան։ Ես եկա այստեղ, որ մի քիչ հանգստանամ։ Գնալու եմ որսի Վուդ եղբոր և այստեղի մի խումբ եղբայրների հետ։ Եկող շաբաթ որսի ենք գնալու։ Գնալու ենք Կենթուքի։ Եվ ես… եղել եմ… ես վերադարձա հենց այն, այն օրը, որ տիկին Վիվերը մահացավ, և դա լավ էր, որովհետև կարողացա ներկա լինել և օգնել Նեվիլ եղբորը հուղարկավորության հարցում։

8 Չեմ ուզում… երկար չեմ ուզում խոսել այս մասին, գիտեք, այն մարդկանց պատճառով, որոնք գանգատվում են։ Որովհետև կարծում եմ, որ ամենաահավոր բանն է, երբ տեսնում ես տղամարդկանց և կանանց, որոնք մշտապես տրտնջում են։ Ես միշտ մտածել եմ. «Ո՛վ Աստված իմ, պահի՛ր ինձ դրանից»։ Հասկանում եք, դա, դա մշտապես տկարացնում է հավատքը, գիտեք։ Դու ուղակի… դու ուղղակի… եթե դու, եթե դու… Գիտեմ, երբ ծերանում ենք, ամեն մեկիս հետ մի բան կատարվում է։ Գիտեմ, որ այդ փոքրիկ բաները կուտակվում են, երբ ծերանում ես, դա միշտ այդպես է։ Բայց ես կարծում եմ, որ ամենասարսափելի բաներից մեկն այն է, երբ սատանան է քող դառնում ինչ-որ մեկի կյանքում. դարձնում է փնթփնթան ծերուկ կամ պառավ։ Հասկանո՞ւմ եք։

Հուսով եմ, որ երբեք այս աստիճանի չեմ հասնի: Հուսով եմ, որ միշտ կկարողանամ բեռներս կրել, և, և կհասնեմ այն աստիճանի, որ... Ուզում եմ, որ կյանքս պսակվի Աստծո փառքով. Նրա երկայնամտությամբ, քաղցրությամբ, խաղաղությամբ, հեզությամբ և Սուրբ Հոգու լեցունությամբ:

9 Եվ ես... հիմնական բաներից մեկը, որը կյանքիս ընթացքում միշտ նեղություն է տվել ինձ, նյարդային վիճակս է: Դա է ինձ ուժասպառ անում և հոգնեցնում: Այնպիսի զգացողություն եմ ունենում, որ ոչ ոքի պետք չեմ, գիտեք, և, և բոլորդ էլ... Դուք էլ եք նման զգացողություն ունենում: Պարզապես ես դա մեծ չափաբաժնով եմ ստանում, գիտեք, և երբեմն դա շատ է վնասում, հազիվ եմ կարողանում... Դա լարվածություն է, ահա թե ինչն է պատճառը: Եվ ես հասել եմ այն աստիճանի, որ շատ հաճախ, հատկապես այսքան տեսիլքների քանակության պատճառով, հասկանում եք, դա ուղղակի ուժասպառ է անում ինձ: Ես նայում եմ մարդուն և մտածում եմ. «Սա տեսիլք է: Ո՛չ, ո՛չ, ո՛չ, տեսիլք չէ: Այո՛: Տեսի՞լք է, թե՞ ոչ»: Հասկանո՞ւմ եք: Դուք չեք կարող պատկերացնել, թե ինչ գնով է դա տրվում: Ուստի հետո, ուստի հետո ինքդ քեզ հարց ես տալիս: Հետո սկսում ես մտածել. «Դե, դու...»: Նահանջում ես և ինքդ քեզ հարցնում ես. «Ի՞նչ, ի՞նչ եմ արել մինչև հիմա: Ահա ես, ես, ես հիսուն տարեկան եմ և ոչինչ չեմ արել Տիրոջ համար, իսկ ես, ես ծերանում եմ: Եվ ի՞նչ... Ո՛հ, Աստված իմ»: Հետո ունենում ես մի բան... որն անվանում են «մելամաղձոտություն»: Իմ հասակակից եղբայրներից ոմանք գիտեն, թե ինչի մասին եմ խոսում: Մի ժամանակ հայրս խոսում էր դրա մասին, և ես ինքս ինձ հարց էի տալիս, թե դա ինչ է նշանակում: Հիմա գիտեմ, թե նա ինչ նկատի ուներ: Սկսում եք այնպիսի զգացողություններ ունենալ, բայց գիտեք, որ մոայլ մտքերում ոչ մի ճիշտ բան չկա: Հասկանում եք, դուք գիտեք, որ ինքներդ եք դա անում:

10 Դրա համար փորձում եմ հիմա մի փոքր հանգստանալ և պատրաստվել այն մեծ թռիչքի համար, որը, հուսով եմ, շուտով լինելու է: Այնուհետև... Շուտով պետք է գնամ Նյու Յորք և ես... ավետարանչական արշավի համար: Իսկ հետո գնալու եմ Շրիվպորտ, հետո կվերադառնամ Ֆենիքս: Այնուհետև կանցնեմ արևմտյան... Միացյալ Նահանգների հարավային սահմանով: Բացի այդ, հիմա

նախապատրաստական աշխատանքներ են կատարվում անդրծովյան հավաքույթների համար, որոնք սկսվելու են եկող տարի, հնարավորինս շուտ, գուցե մարտին կամ ապրիլին, նման մի բան: Կսկսենք Ստոկհոլմից կամ Օսլոյից, հետո ամբողջ աշխարհով մեկ, եթե ստացվի հաջորդ ճանապարհորդության ժամանակ:

11 Հիմա տանն եմ մնում, որ մի քիչ հանգստանամ և վերականգնեմ ուժերս: Եվ եթե Տերը կամենա, եկող կիրակի վերադարձած կլինեմ Կենթուքիից: Եվ, և եթե հարմար լինի, Տիրոջ կամքը լինի, եղբայր Նևիլն էլ համաձայն լինի, կփորձեմ եկող կիրակի այստեղ հավաքույթ անցկացնել, եթե, եթե Տերը կամենա: Եթե Տերը կամենում է, եղբայր Նեվիլն էլ համաձայն է, ես, ես կլինեմ այստեղ: Այո՛, պարո՛ն, Նա նույնպես... եթե Տերը կամենում է, եղբայր Նևիլն էլ համաձայն է: Հուսով եմ, որ այդպես էլ կա: Հիմա, հասկանում եք... Այնուհետև, եթե Տիրոջ կամքն է, որոշ ժամանակով հեռու կլինեմ ձեզանից:

12 Եվ ես... կուզենայի պարզապես ձեզ տալ կարճ պատգամներ, որոնք կան սրտումս, որոնք ես, ես, ես ուզում եմ ասել ձեզ, հասկանում եք, որպեսզի եղբայրական հաղորդակցություն ունենանք դրա շուրջ: Հիմա մի քանի՝ հինգ թե վեց այդպիսի պատգամ կա, որոնք ինձ տրվել են վերջերս, երբ գնացել էինք սկյուռ որսալու: Երբ գնում եմ անտառ, միշտ հետս թուղթ ու մատիտ եմ վերցնում: Հասկանո՞ւմ եք: Երբ օրը բացվում է և լուսավոր է լինում գնում եմ հենվելու ինչ-որ ծառի: Եթե չեմ քնում, սկսում եմ աղոթել, հետո... Տերն ինչ-որ բան է ինձ տալիս: Այդ ժամանակ սկսում եմ նշումներ անել, հասկանում եք: Գիտեք՝ ինչ նկատի ունեմ. երբ ուշքի ես գալիս, հետո... Հետո գալիս եմ այստեղ և այդ ամենը գրի եմ արնում թղթի վրա: Հետո, երբ ինձ խնդրում են քարոզել, ես հանում եմ նշումներս և տեսնում եմ, թե ինչ կարող եմ ասել: Հասկանո՞ւմ եք: Հենց դա էլ կատարվեց հիմա:

13 Դրա համար հիմա կուզեի, եթե Տերը կամենա, խոսել պարզապես... Ես փորձում եմ դարձնել... կրճատել այս մեծ, երկար քարոզները, հասկանում եք, որոնք ժամեր են տևում: Այն օրը երեկոյան Տերն ինձ օգնեց Չիկագոյում, որտեղ ես տվեցի կես ժամ տևողությամբ պատգամ: Ինչ-որ մեկը մոտեցավ և ասաց. «Ես չէի կարծում, որ այդպես կկարողանաք, բայց դա ստացվեց ձեզ մոտ»: Տեսնում եք, կես ժամ՝ երկու ժամվա կամ մեկուկես ժամվա

փոխարեն։ Դրա համար գուցե այս երեկո կկարողանամ շտապել և մի փոքր կսովորեմ ձեզ երկար չպահել։

14 Թող Աստված օրհնի ձեզ։ Ուր էլ գնամ, չեմ գտնի այնպիսի վայր, ինչպիսին այս խորանն է։ Սա տուն է, քաղցր տուն։ Եվ ցավակցում եմ Ուիվեր ընտանիքին և այն սևամորթ եղբոր ընտանիքին, որը մեռավ։ Ես որոշ ժամանակ աղոթել եմ նրա հետ մինչև իր հեռանալը. հրաշալի մարդ էր։ Հիմա նա տանն է, Աստծո հետ, և ամեն բան վերջացած է։ Ամեն դեպքում մի օր բոլորս էլ գնալու ենք, մենք դա գիտենք։ Դրա համար մենք… թող Տերը պահի նրանց հոգիները խաղաղության մեջ, և մի օր մենք սպասում ենք այն օրվան, երբ բոլորս կհանդիպենք այն երկրում, որտեղ չկա հիվանդություն, վիշտ կամ մահ։ Մինչ այդ, եկե՛ք պարզապես անենք Ավետարանի համար այն ամենը, ինչ կարող ենք։

15 Խոսելով լարվածության մասին… Այս առավոտ աղոթեցի սրա համար։ Ի՞նչ կանեիք, եթե չունենայիք լարվածություն։ Մտածեք այդ մասին։ Լարվածությունը կյանքի մաս է կազմում; Այդ միտքն ինձ քաջալերեց։ Եթե լարվածություն չլիներ, դուք նման կլինեիք քրջե տիկնիկի, ոչ մի զգացմունքներ չէիք ունենա։ Չէիք ունենա մի բան, հանուն որի պետք է պայքարել։ Ամուսինների նման, եթե օրինակ, կինը մի բան է ուզում ձեռնարկել, և նրանք փորձում են դա միասին անել (հատկապես քրիստոնյաները), և եթե նրանցից մեկը ուզում է… Հետո, երբ գալիս եք միասնաբար… տեսնում եք, թե ինչ է նա արել. նա տեսնում է… Հասկանում եք, լարվածությունը ձեզ ավելի է մոտեցնում։ Եվ ինչ–որ մեկը ձեզ ասում է. «Դե,— ասում է,— միայն մտածիր, թե ինչ լարվածության է ենթարկվել այդ խեղճ կինը, երբ ամուսինը ճիշտ չի վարվել իր հետ, կամ էլ՝ ամուսինն է շատ լարվածություն կրել, երբ կինը ճիշտ չի վարվել։ Հետագայում երբ ամեն բան ներվի, մտածեք միմյանց հանդեպ ունեցած ձեր զգացմունքների մասին։ Ո՛հ, դու ուղղակի…»։ Տեսնում եք, լարվածությունը անհրաժեշտ է։ Ահա և վերջ։

16 Ինչ վերաբերում է զգացողություններին, մտածեք, թե ինչ կլիներ, եթե չունենայիք ոչ մի զգացողություն, ոչ մի ցավ կամ ոչինչ։ Ի՞նչ կլիներ, եթե ոչ մի ցավ չունենայիք։ Դուք ոչ մի զգացողություն չէիք ունենա։ Հասկանո՞ւմ եք։ Իսկ եթե զգացողություն չունենայիք, ուրեմն ձեր զգայարաններից մեկը վերացել է։ Հասկանո՞ւմ եք։ Դրա համար, տեսնում եք, այդ ամենը ճիշտ է։ Ուստի՝ «Ո՛վ

Աստված, տուր մեզ շնորհք՝ տոկալու այդ ամենին»: Դա է անհրաժեշտ: Մենք պարզապես պետք է կանգնենք այդ շնորհքով գոտեպնդված և ասենք. «Մենք գիտենք, որ երբ այս կյանքը վերջանա, կա մի փառավոր կյանք, որ մեզ սպասում է այն կողմում»: Իսկ այժմ մենք, մենք չմոռանանք, որ այդ ամենի մեջ կա լարվածություն,

17 որը... կան մարդիկ, ովքեր փորձում են հավատացնել, որ քրիստոնյան ազատ է ամեն հոգսից: Դուք...»: Ո՛չ, դա այդպես չէ: «Դուք ազատ կլինեք ամեն տեսակ լարվածությունից»: Ո՛հ, ոչ: Լարվածությունն ավելանում է, երբ դուք քրիստոնյա եք դառնում, որովհետև նախկինում դուք անփույթ, անհոգ մեկն էինք և չէիք մտահոգվում ձեր արածների համար:

18 Բայց երբ իսկական քրիստոնյա եք դառնում, ամեն վայրկյան ինքներդ ձեզ հարց եք տալիս. «Արդյո՞ք ես հաճելի եմ իմ Տիրոջը: Երանի լսեմ Նրա ձայնը»: Դա լարվածություն է առաջացնում, ստիպում է ձեզ, որ զգոն լինեք: Հենց դա է ձեզ դարձնում այն, ինչ կաք: Դրա համար ամենից առաջ լարվածությունն օրհնություն է: Նայած թե որ կողմից եք նայում: Նայած, թե որ կողմից եք դրան նայում: Հասկանո՞ւմ եք: Եթե նայեք մյուս կողմից... Ինչքան էլ շերտերը բարակ կտրեք, երկու կողմ կունենան: Դուք պետք է երկու կողմն էլ նայեք:

19 Դրա համար լարվածությունը... Ես մտածում էի. «Ո՛հ, Աստված իմ, սա... Ի՞նչ է նշանակում այս լարվածությունը: Երանի ծնված լինեի առանց այս լարվածության»: Եթե չունենայի այս լարվածությունը, չէի լինի այն, ինչ կամ: Գուցե նույնիսկ քրիստոնյա չլինեի: Այս լարվածությունն էր, որ ինձ բերեց Հիսուսն Քրիստոսին: Հասկանո՞ւմ եք: Դա օրհնություն եղավ ինձ համար:

20 Ինչպես Պողոսն ասաց, երբ ուներ լարվածություն կամ նման մի բան, նա երեք անգամ խնդրեց Տիրոջ, որ ազատի իրեն դրանից: Բայց Տերն ասաց. «Սավո՛ւղ, Իմ... Պողո՛ս, Իմ շնորհը քեզ բավական է»:

21 Նա ասաց. «Այդ պատճառով ես պարծենում եմ իմ տկարություններով: Երբ ես տկար եմ, այն ժամանակ զորավոր եմ»: Տեսնո՞ւմ եք: Եթե սա Աստծո կամքով է, ամեն ինչ լավ է:

22 Հիմա, մի անգամ ես Տիրոջը հարցրի, երբ դա ինձ այնքան էր անհանգստացնում, որ վախենում էի: Եվ Նա ինձ ասաց, դա ութ կամ տաս տարի առաջ էր, ասաց. «Դա

այլևս քեզ չի վախեցնի»: Եվ դա այլևս ինձ չվախեցրեց: Ո՛չ, պարո՛ն: Մի՛, մի՛ անհանգստացեք դրա համար: Ես դա զգում եմ, գիտեմ, որ դեռ կա, բայց շարունակում եմ առաջ գնալ, որովհետև դա ինձ այլևս չի վախեցնում: Ես այնքան շնորհակալ եմ դրա համար:

Հիմա, Նա կարող էր ասել. «Դու այլևս չեն ունենա այդ լարվածությունը», ճիշտ այնպես ինչպես ասաց. «Այլևս չես վախենա»:

23 Սա Իր կամքն է, որ դա կատարվի, դրա համար ես ընդունում եմ դա և ասում. «Շնորհակալությո՛ւն, Տեր, կգնամ այդպես»:

24 Այժմ մի պահ խոնարհենք մեր գլուխները աղոթքի համար: Կա՞ հատուկ խնդրանք (տեսնում եմ, որ այնտեղ թաշկինակներ են դրված): Բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Տե՛ր, խնդրում եմ, որ օրհնես Քո ամեն զավակին:

25 Մեր երկնային Հայր, մենք հիմա մոտենում ենք Քո մեծ ու փառավոր շնորհած Գահին, որովհետև հրավիրված ենք: Մենք գալիս ենք Հիսուս Քրիստոսի հրավերով: Եվ մենք գալիս ենք մեր բոլոր հոգսերով և դրանք գցում ենք Իր վրա, որովհետև Նա հոգում է մեր մասին: Ի՜նչ մեծ մխիթարություն է իմանալ, որ Նա հոգ է տանում մեր մասին: Երկնքի հզոր Աստված՝ Արարիչը, հոգում է մեր՝ Իր արարածների մասին: Մենք այնքա՜ն ուրախ ենք դրա համար, Տե՛ր: Ի՜նչ մխիթարություն է սա մեր ապրած ժամանակներում, երբ Քո Խոսքից բացի ուրիշ ոչ մի տեղից հնարավոր չէ մխիթարություն ստանալ: Մեր մխիթարությունը Քո խոստումն է: Եվ Քո խոստման մեջ պատվիրել ես, որ մեր խնդրանքները հայտնի անենք և՝ «Եթե դուք Իմ Անունով մի բան խնդրեք, կանեմ դա»: Եվ այս բոլոր փառավոր խոստումները. «Խնդրեցե՛ք և կստանաք: Եթե այս լեռանն ասեք՝ «Շարժվի՛ր» և չկասկածեք, այդպես էլ կլինի»: Բոլոր այս խոստումները, և մենք կարող ենք Դրանից ստանալ այն, ինչի համար, որ մենք աղոթում ենք:

26 Ձեռքերը բարձրացված են, նրանք ինչ–որ բանի կարիք ունեք, Տե՛ր: Դու գիտես նրանց, նրանց կարիքները, հոգա դրանք, Հայ՛ր: Ես միացնում եմ իմ աղոթքը նրանց աղոթքներին և բերում եմ Քո առջև՝ բարձրացնելով ձեռքերս: Ահա այստեղ՝ ամբիոնի վրա թաշկինակներ են դրված: Ո՛հ, ինչպիսի՜ հավատք ունեն մարդիկ, խանդավառ հավատք, Տեր… Ես կարծում եմ, որ Դու ինձ օրհնել ես հենց դրանով՝ հիվանդների համար աղոթելով:

Ուր էլ որ… ամեն տեղ, ուր էլ որ գնամ, յուրահատուկ մի բան կա, երբ աղոթում եմ հիվանդների համար։ Ո՛վ Աստված, օգնի՛ր ինձ հիմա։ Ես ամենայն անկեղծությամբ խնդրում եմ, որ պատասխանես նրանց խնդրանքներին, որոնք այստեղ թաշկինակներ են դրել։ Թող Քո շնորհքը լինի նրանց վրա։

27 Տե՛ր, մենք գիտենք, որ քույր Հիքսն այստեղ մի կնոջ է բերել, որն ինչ-որ տեղից ինքնաթիռով եկել է այստեղ, որ աղոթենք նրա համար։ Նա քաղցկեղ ունի և ուզում է իմանալ, թե կարո՞ղ է գալ այստեղ։ Խնդրում եմ, ո՛վ Աստված, որ խնայես այդ մարդու կյանքը. շնորհի՛ր դա։ Խնդրում եմ նաև իմ փոքրիկ զարմիկի՝ Միկիի համար, որը պառկած է անկողնում և բարձր ջերմությամբ և փխսումներ ունի։ Քիչ առաջ եմ եկել այնտեղից։ Տե՛ր, ես, ես հավատում եմ, որ մենք այնտեղ հավատով աղոթք արեցինք, և Դու կանգնեցրիր դա, և ես, ես, ես շնորհակալ եմ Քեզանից, զգացի, որ ջերմությունը հեռացավ նրանից, սենյակից դուրս գալուց առաջ։

28 Հիմա, Տե՛ր… և շնորհակալություն ամեն բանի համար։ Հիմա ինձ է բաժին ընկել Քո Խոսքը բերելու։ Տո՛ւր մեզ Քո Խոսքը, Տե՛ր։ «Քո Խոսքը Ճշմարտություն է»։ Օրհնի՛ր մեր անձերը և տո՛ւր մեզ այն շնորհը, որի կարիքն ունենք, որ կարողանանք այս երեկո վերցնել Խոսքի մեջ եղած Աստծո Խոստումները, որ զորանանք շաբաթվա մնացած օրերին.շնորհի՛ր դա։ Օրհնի՛ր մեր հովվին՝ այս քաջ հոգուն, իր կնոջը և երեխաներին, սարկավագներին, հոգաբարձուներին և յուրաքանչյուր մարդու, ով մտնում է այս շենքը կամ դուրս է գալիս այստեղից։ Շնորհի՛ր դա, Հա՛յր։ Հիսուս Քրիստոսի անունով ենք խնդրում այս օրհնությունները։ Ամե՛ն։

29 Հիմա, կուզեի երկու հատված կարդալ Տիրոջ գրություններից։ Նախ կուզեի կարդալ Սաղմոսաց գրքից, 86-րդ Սաղմոսը։ Հետո կուզեի կարդալ Մատթեոսի Ավետարանի 16-րդ գլխից, 1-3 համարները։ Չեմ կարդալու ամբողջ սաղմոսը, միայն մեկ հատված. կկարդանք մինչև 11-րդ համարը, որը կազմում է սաղմոսի կեսից ավելին։

30 Եվ ես ուզում եմ հայտարարել սա, եթե քարոզից առաջ ասում եմ վերնագիրը՝ *«Միության ժամանակն ու նշանը»։* «Միության ժամանակի Նշանը», դա մի տեսակ բարդ է հնչում։ *Միություն* (Հասկանո՞ւմ եք), *ժամանակ*՝

միության ժամանակը, ահա թե ինչ է հիմա։ Եվ կա այդ միության ժամանակի *Նշանը։*

31 Սազմոսում, սա Դավիթի աղոթքն է, 86–րդ Սաղմոսը։

Խոնարհեցրո՛ւ Քո ականջը, ո՛վ ՏԵՐ, լսի՛ր ինձ, քանի որ աղքատ ու կարիքավոր եմ։

Պահի՛ր անձս, քանի որ ես մաքուր եմ, ո՛վ իմ Աստված, Քեզ հուսացող ծառայիդ Դու փրկի՛ր։

Ողորմած եղիր իմ նկատմամբ, ո՛վ Տեր, քանի որ Քեզ եմ կանչում ամեն օր։

Ուրախացրո՛ւ Քո ծառայի անձը, քանի որ դեպի Քեզ եմ բարձրացնում իմ անձը, ո՛վ Տեր։

Քանի որ Դու, ո՛վ Տեր, բարի ես ու ներելու պատրաստ, գթառատ՝ բոլոր նրանց հանդեպ, որ Քեզ են կանչում։

Ակա՛նջ դիր իմ աղոթքին, ո՛վ ՏԵՐ… լսի՛ր իմ պաղատանքների ձայնը։

Նեղությանս օրը Քեզ եմ աղաղակելու, քանի որ Դու ինձ պատասխան ես տալիս։

Ո՛հ, մի՞թե գեղեցիկ չէ. «Դու ինձ պատասխան ես տալիս»։

Աստվածների մեջ Քեզ նմանը չկա, ո՛վ Տեր, և Քո գործերի պես ոչինչ չկա։

Բոլոր ազգերը, որ Դու ստեղծեցիր, պիտի գան ու երկրպագեն Քո առջև, ո՛վ Տեր, և Քո անվանը պիտի փառք տան,

քանի որ Դու մեծ ես ու հրաշքներ ես գործում, միայն Դո՛ւ ես Աստված։

Հիմա լսե՛ք։

Սովորեցրո՛ւ ինձ Քո ճամփան, ո՛վ ՏԵՐ, ես, *ես Քո ճշմարտության մեջ եմ քայլելու. միացրո՛ւ իմ սիրտը, որպեսզի երկյուղի Քո անունից։* (Տեսնո՞ւմ եք։ Միությո՛ւն)… *միացրո՛ւ իմ սիրտը, որպեսզի երկյուղի Քո անունից։*

32 Այժմ կխոսեմ *միության* և *ժամանակի նշանի* մասին։ Հիմա, Մատթեոսի Ավետարանի 16–րդ գլուխ։

Փարիսեցիներն ու սադուկեցիները եկան Հիսուսի մոտ… փորձելով ուզում էին, որ երկնքից նշան ցույց տա իրենց։

Եվ Նա պատասխանեց և ասաց նրանց. «Երբ երեկո է լինում, ասում եք, ես… *որ եղանակը պարզ կլինի, որովհետև երկնակամարը կարմրել է:*

Իսկ առավոտյան՝ «Այսօր վատ եղանակ է լինելու, քանի որ երկինքը կարմրած ու մթագնած է: Կեղծավորնե՛ր, երկնքի դեմքը քննել գիտեք, բայց ժամանակի նշանները չե՞ք կարող քննել:

Թող Տերն Իր գթառատ օրհնություններն ավելացնի այս Խոսքի ընթերցմանը:

33 Հիմա, մենք կխոսենք այս միության, միության ժամանակների մասին, միության ժամանակի նշանի մասին: Տեսնում եք, Հիսուսն այստեղ էր, այս վերջին հատվածում, որ կարդացինք, Նա հանդիմանում էր կրոնավորներին, որովհետև ընդունակ չէին զանազանելու ժամանակները կամ ժամանակների նշանները: Հիմա, մարդկու համար միշտ փառավոր բան է եղել, հասկանում եք, *իր ապրած ժամանակների նշանները* քննել կարողանալը, որովհետև Աստված այնքան պարզ է գրել դրա մասին, որ ոչ ոք չկարողանա խուսափել դրանից:

34 Հիմա, սովորաբար ես հետ եմ գնում և օրինակները վերցնում եմ այլ սպասավորներից, աստվածաշնչյան ժամանակների Տիրոջ ծառաներից (ինչպես օրինակ՝ Նոյի ժամանակները, Դավթի ժամանակվա նշանը և, և այլն, տարբեր նշաններ), բայց այս երեկո ուզում եմ մի կողմ թողնել դրանք, որ, որ ժամանակ խնայենք, որպեսզի կարողանամ… Բայց Աստված միշտ նույն կերպ է գործել՝ Նա տալիս է ժամանակի բնական նշան, որպեսզի բոլորը իմանան, թե ինչ ժամանակ է դա, դա եղել: Եվ այս փարիսեցիները պետք է իմանային իրենց ժամանակը: Նրանք պետք է ճանաչեին իրենց ժամանակաշրջանը: Մեկ այլ տեղում Նա ասաց. «Եթե դուք Ինձ գիտենայիք, Իմ օրն էլ կգիտենայիք»: Հասկանո՞ւմ եք: Սա, սա շատ, հրաշալի բան է, երբ մենք հասկանում ենք: Հասկանում եք. «Առանց հասկացողության…»:

35 Դրա համար նրանք միշտ մարգարեներին վկայակոչելիս ասում էին. «Եվ Նա հասկացողություն ստացավ Տիրոջ տեսիլքներից: Իսկ Տիրոջ Խոսքը գալիս էր հին ժամանակների մարգարեներին»: Տեսնում եք, նրանք մարգարեների միջոցով Տիրոջ Խոսքի հասկացողությունն ունեին: Բացի դրանից մարգարեները նշան էին տալիս: Ինչպես այն մարդը, որը

երկար ժամանակ մի կողքի վրա պառկեց, հետո շրջվեց և մյուս կողքի վրա պառկեց: Մեկ ուրիշը պետք է իր շորերը հաներ: Ո՛հ, շատ բաներ կան, որոնք նրանք արեցին՝ իրենց ապրած ժամանակի նշանը ցույց տալու համար: Եվ հիմա մենք գիտենք, որ այն Աստված, ով ստեղծեց երկինքն ու երկիրը, և, և այսպես է շարադրել Իր գործը, որ բնութագրելու է Իր ժամանակը նշանի միջոցով, այդ նույն Աստվածը կենդանի է այսօր: Դրա համար մենք պետք է, մի բան... Երբ մենք տեսնում ենք ժամանակը, որում ապրում ենք, տեսնում ենք, որ ինչ-որ մեկը ինչ-որ տեղ ինչ-որ բան չի նկատում: Հասկանո՞ւմ եք: Որովհետև Աստված երբեք թույլ չէր տա, որ այս բաները կատարվեն առանց մեզ հստակ նշան տալու, թե որտեղ, որ, որ մենք հասկանանք:

36 Նույնն էլ այսօր է. կրոնավորները չեն կարողանում ճիշտ կարդալ այս նշանները: Ճիշտ այնպես է ինչպես այն ժամանակ, նրանք չէին կարծում, որ ժամանակը եկել է: Նրանք, նրանք կարծում էին, թե այն ժամանակ բավականին խաղաղ էին ապրում, այդ պատճառով էլ ոչ մի Մեսիայի էլ չէին փնտրում: Բայց Հիսուսն ասաց, որ Նրա գալուստը պիտի լինի «ինչպես գողը գիշերվա մեջ», երբ, երբ մարդիկ անտեղյակ են լինելու Իր գալստի վերաբերյալ: Բայց այնտեղ կային մի քանի կույսեր՝ նրանցից կեսը, ովքեր դուրս եկան Նրան դիմավորելու, յուղ ունեին իրենց լապտերների մեջ և պատրաստ էին: Նրանք սպասում էին այդ նշանին: Ահա թե ում եմ ես դիմում այս երեկո, հասկանում եք, նրանց, ովքեր սպասում են այդ նշանին՝ Նրա գալստյան նշանին:

37 Տիրոջ կողմից տրված այս նշանները, տրված են միայն հավատացյալներին: Անհավատները ոչինչ չեն տեսնում: Նրանք անցնում են ուղիղ դրանց վրայով և չեն տեսնում այդ: Իսկ հիմա, դա նույնքան հաստատ է, որքան, եթե Աստծո Հրեշտակը կանգնած լիներ այս բեմի վրա ճիշտ այնպես ստույգ, ինչպես, ինչպես ես ձեզ եմ նայում, կարողանայի դրան նայել, կամ դուք կարողանայիք դրան նայել և ես չկարողանայի տեսնել դա, կամ ես կարողանայի դրան նայել և դուք չտեսնեիք դա: Հիմա, դուք գիտեք, որ դա սուրբգրային է, դա կատարյալ ճշմարտություն է: Նրանք տեսնում էին... Դուք գիտեք, որ Պողոսն ընկավ գետնին, բայց նրանք... նրանցից և ոչ մեկը չտեսավ այդ Լույսը:

38 Այդ Լույսն այնտեղ էր, երբ Հովհաննեսը կանգնած էր

բազմության առջև, և հարյուրավոր կրոնավորների, և, և իմաստունների ու մեծերի առջև, որոնք կանգնած էին գետի ափին: Եվ Հովհաննեսն ինքն ասաց, նա վկայեց, որ տեսավ, թե ինչպես է Աստծո Հոգին աղավնու պես իջնում, և Նրա վրա մնում, և մի Ձայն ասում է. «Սա է Իմ սիրելի Որդին, ում հավանեցի»: Բացի Հովհաննեսից ոչ ոք չտեսավ Դա: Հասկանո՞ւմ եք: Դա միայն նրա համար էր:

39 Ուշադրություն դարձրե՞լ եք, թե որքան պարզ էր նշանը մոգերի համար: Նրանք նայեցին, այնտեղ... Նրանք եբրայեցիներ էին: Իրականում նրանք հնդիկ աստղագետներ չէին, այլ՝ եբրայեցիներ: Որովհետև նրանք այդ երկիր էին գնացել, որ աստղագիտություն սովորեն՝ իրենց ուսումն ավարտելու համար: Եվ երբ նրանք... նայում էին Երուսաղեմի ուղղությամբ, և գիտեին, որ տեսնում են իրենց, իրենց տոհմաբանության երեք աստղերը՝ Քամինը, Սեմինն ու Հաբեթինը, որոնցից նրանք սերում էին, և նրանք տեսան իրենց աստղերը իրենց տոհմաբանության մեջ: Դա նրանց համար նշան էր, որ երբ այդ աստղերը մի շարք կազմեն, ուրեմն Մեսիան երկրի վրա է:

40 Ո՜հ, Աստված իմ; Զարմանալի չէ, որ նրանք եկան. «Որտե՞ղ է Նա: Որտե՞ղ է Նա, որ հրեաների թագավոր ծնվեց, որովհետև մենք Նրա աստղը տեսանք արևելքի մեջ ու եկանք Նրան երկրպագելու: Որտե՞ղ է Նա»: Նրանք գիտեին, որ ինչ-որ վայրում պառկած էր այդ մանուկ Մեսիան, որովհետև Աստված նրանց ժամանակի նշան էր տվել, որ Աստված և մարդը միանում են: Ինչպիսի՜ միություն է, երբ Աստված միացավ մարդկային մարմնին: Գլխավոր, երբևիցե եղած ամենափառավոր միությունը, որը եղել է, սա էր՝ երբ Աստված միացավ մարդուն: Նա լքեց Աստծո Իր, Իր փառավոր դիրքը, տարածեց Իր վրանը, մարդացավ և դարձավ նրանցից մեկը, որ փրկագնի նրանց: Միություն: Եվ ի՞նչ: Դա ընդմիշտ խաղաղություն հաստատեց Աստծո և մարդու միջև: Որքա՜ն երախտապարտ ենք դրա համար:

41 Եվ նշանները չուղարկվեցին... Հիմա միայն մտածե՛ք. բոլոր մարդկանց համար և աստղագետների համար, իրենց ժամանակ աստղերը ժամացույցի դեր էին խաղում: Աշտարակի վերևում դիտորդ էր բարձրանում, և ինքն այնտեղ էր բարձրանում և դիտում էր: Եվ երբ տեսնում էր, որ որոշ աստղեր անցնում էին որոշ համաստեղություններով, իմանում էր, թե ժամը քանիսն

է: Հիշեք, թե ինչ է ասում Սուրբ Գիրքը. «Դիտո՛ղդ, ժամը քանի՞սն է»: Եվ դիտորդը վերադարձնում և ասում էր նրան, թե դա որ ժամում էր: Հասկանում եք, նրանք ժամանակն իմանում էին աստղերի միջոցով:

42 Հիմա, տարօրինակ չէ, որ այս աստղերը շարք էին կազմել միայն այդ երեքի համար, և ուրիշ էլ ոչ ոք դա չտեսավ: Տեսնո՞ւմ եք: Հենց մի շարքով էին: Հիմա, դուք էլ կարող եք նույն կերպ շարք կազմել ըստ Սուրբ Գրքի: Հասկանո՞ւմ եք: Երբ այդ աստղերը մեկ դարձան, միացան այդ համաստեղության մեջ, այդ երեք մարդն էլ միացան այդ պահին: Եվ դուք էլ կարող եք Աստծո հետ միանալ Իր Խոսքով, մինչև այդ բաներն իրական դառնան, և կկարողանաք տեսնել դրանք և իմանալ, որ դա ճշմարտություն է: Հասկանո՞ւմ եք: Ժամանակի նշանը: Բայց կարող եք նայել դրա վրայով և ասել. «Ո՛հ, անհեթեթ բաներ են»:

43 Բայց *ձեզ* համար դա անհեթեթություն չէ: Ձեզ համար...դուք միացած եք Խոսքի հետ, և ահա Այն: Այդ ժամանակ դա, դա բացարձակ Լույս է, Պաթ եղբայր, երբ, երբ, երբ, երբ տեսնում ես, թե ինչպես է այս նշանը միանում հավատացյալի հետ: Ահա թե ում եմ ես ուղղում սա՝ հավատացյալներին, որովհետև անհավատը չի տեսնում սա: Եվ եթե Նա այսօր լիներ երկրի վրա, ինչպիսի՜ հանդիմանություն կլիներ սա մեր օրերի կրոնավորներից շատերի համար, ովքեր չեն կարողանում կարդալ այս նշանը. նշաններ, որոնք մենք ամեն օր կարդում ենք այստեղ՝ խորանում, և տեսնում ենք այս բոլոր բաները: Ուրիշներն էլ կարդում են դա և տեսնում են ձեռքի գրածը պատի վրա, այնուհանդերձ շատերն անտեսում են դա, կամ էլ ընդհանրապես չես տեսնում: Նրանց համար դա իմաստ չունի, նրանք դա չեն նկատում:

44 Այժմ ուշադրություն դարձրեք, որ Նա, Նա մատնացույց արեց ազգային նշանները: Երբ Նրան հարցրեցին սրա մասին, նրանք նշաններ էին ուզում, և Նա նրանց տվեց նշաններ, որոնք իրականացան: Նրանք ուզում էին իմանալ, թե երբ է լինելու աշխարհի վերջը, և որն է լինելու վերջի նշանը: Նա Սուրբ Գրքի միջոցով նրանց բազմաթիվ հատվածներ ցույց տվեց ազգային նշանների մասին, նշաններ երկնքում և երկրի վրա: Նա նրանց տվեց նշաններ, նշաններ, նշաններ և էլի նշաններ: Եվ երբ... Մի տեղ էլ Նա նրանց ասաց

ազգային նշանի մասին: Ասաց. «Երբ տեսնեք ազգերը, տեսնում եք,— սկսում են հավաքվել Երուսաղեմի շուրջ, — տեսնում եք, այն ժամանակ կիմանանք որ նրա ավերումը մոտ, է»: «Երբ որ կտեսնեք Երուսաղեմը զորքերով շրջապատված»:

45 Հիմա, մինչև նրանք կկարողանային անել դա, Աստված... աշխարհը պետք է միավորվեր: Տիտոսը՝ մեծ հռոմեացի զորավարը, պետք է հավաքեր իր զորքերը և շրջապատեր դա, այն բանից հետո, երբ այդ հրեաները մերժեցին ժամանակի նշանը, որն Աստված տվել էր իրենց: Հենց այդ ժամանակ Տիտոսը հավաքեց իր զորքերը և եկավ քաղաքը գրավելու: Նախ պետք է միաբանվեր (այսպես կոչված) Աստծո ժողովուրդն Աստծո Խոսքի դեմ, նախքան այդ ազգը կկարողանար միաբանվել Աստծո ժողովրդի դեմ: Տեսնում եք, միություն, միավորում, միաբանություն:

46 Ես հավատում եմ, որ մենք ապրում ենք միության մեծ ժամանակաշրջանում: Ես ձեզ ցույց տվեցի այս կարմիր լույսերը, առկայծող աղդանշանները և այլն (կանանց վարքը, տղամարդկանց վարքը և եկեղեցիների վարքը), ամբողջ սրտով խոսեցի այս փոքրիկ խմբի հետ՝ ցույց տալով, որ ես հավատում եմ, որ մենք մի շարք ենք կազմում Աստծո Խոսքի հետ, այս փառավոր մարգարեական ժամանակում, որը Տեր Հիսուսի գալուստից անմիջապես առաջ է: Մենք միավորվում ենք և պատրաստվում:

47 Հիմա, տեսնում եք, մինչև Տիտոսը կմիավորեր ազգերի... իր զորքերը, Իսրայելը միավորվեց և միաբանվեց, որ մերժի Հիսուսին որպես Մեսիա: Նրանք մերժեցին, երես դարձրին Նրանից և խաչեցին Նրան: Հետո, երբ նրանք մերժեցին փրկությունը, որն ուղարկվեց իրենց, նրանք միավորվեցին՝ այդ բանն անելու համար: Հիմա, պահե՛ք սա ձեր մտքում՝ նրանք բոլորը միավորվեցին, որ մերժեն ժամի պատգամը: Անհրաժեշտ էր, որ նրանք այդպես անեին: Եվ երբ այդպես արեցին, այդ ժամանակ ազգերի նշանը դրսևորվեց:

48 Ազգերը սկսեցին միավորվել, և Տիտոսը բերեց հռոմեացիներից և հույներից բաղկացած այս մեծ զորքը և շրջապատեց Երուսաղեմի պատերը, փակեց այդ մարդկանց այնտեղ և դատապարտեց սովամահության: Նրանք ծառի կեղևներ էին ուտում: Հովսեփոսը՝ մեծ պատմաբանը, պատմում է մեզ դրա մասին: Եվ խոտ

էին ուտում: Նույնիսկ եփում և ուտում էին միմյանց երեխաներին, հասկանում եք, այն աստիճանի էին խելագարվել: Հետո, երբ Տիտոսը, ի վերջո, պաշարել էր Երուսաղեմը շրջապատող բլուրները, իսկ, իսկ պատերի ներսում գտնվող այդ մարդիկ կարծում էին, թե Աստծո կամնքն են կատարում, երբ տեսան, թե ինչպես են այդ զորքերն առաջ շարժվում: Նրանք հրաժարվել էին լսել այդ փառավոր Ուսուցչին, Տեր Հիսուսին, երբ նրանց հայտնել էր այդ բաների մասին:

49 Քրիստոնյաներից ոչ մեկը չբռնվեց այնտեղ, որովհետև նրանք տեսել էին նշանը և փախել էին: Հասկանո՞ւմ եք: Ասել էին. «Նրանք, որ տանիքի վրա են, թող չիջնեն, կամ նա, ով որ արտի մեջ է, թող հետ չդառնա իր հանդերձները վերցնելու, այլ փախե՛ք Հրեաստան, և աղոթե՛ք, որ ձեր փախուստը ձմռանը չլինի, կամ էլ շաբաթ օրը»: Որովհետև ձմռանը սարերը ծածկված կլինեին ձյունով, իսկ շաբաթ օրը դուռը, դռները, դարպասները փակ կլինեին, և նրանք ծուղակը կընկնեին: Տեսնո՞ւմ եք: Եթե Տերը կամենա, մենք շուտով կհասնենք դրան, այն մասին... թե ինչպես է Աստված այդ բաներն անում:

50 Հիմա ուշադրություն դարձրե՛ք, Նա... Նրանք աղոթեցին, որ դա լինի... այդպես չլինի, Հիսուսը պատվիրեց նրանց աղոթել դրա համար, և նրանցից և ոչ մեկն այնտեղ չգտնվեց: Նրանք հեռացան, որովհետև նայել էին այդ նշանին և հեռացել: Ահա և վերջ:

51 Ո՛հ, ինչպե՞ս պետք է եկեղեցիներն այսօր քննեն մեր ապրած ժամանակի նշանը: Փախե՛ք ինչքան որ ուժ կա ձեր ոտքերում դեպի Գողգոթա, փրկեք ձեր կյանքը: Ոչ թե փախեք ինչ–որ եկեղեցի, այլ Հիսուս Քրիստոսի մոտ: Միացեք Նրա հետ, և ոչ թե որևէ կազմակերպության կամ եկեղեցական հավատամքի հետ: Միացե՛ք Քրիստոսի հետ և համոզվեք, որ դա Նրա հետ եք միացել: Չեք կարող միանալ ում հետ պատահի, անպայման վստահ եղեք, որ Նրա հետ եք միացել: Ինչպիսի՞ միության ժամանակ է:

52 Հիմա, մենք տեսնում ենք, որ նրանք մերժեցին Մեսիային, իսկ հետո միավորվեցին, իրենց համար միավորում ստեղծեցին, և սահմանեցին... իրենց մեջ կանոն, որ եթե մեկը ընդունի Հիսուսին որպես Մարգարե, պետք է վտարվի եկեղեցուց: Հիշո՞ւմ եք ի ծնե կույր աչքերով ծնված տղայի պատմությունը: Աշակերտները հարցրին. «Ո՞վ է մեղանչել. նա՞, հա՞յրը, թե՞ մայրը»:

53 Հիսուսն ասաց. «Այս դեպքում ոչ մեկը, այլ որպեսզի Աստծու գործերը արվեն, հայտնի դառնան»:

54 Հիշում եք, որ նրա ծնողները չկարողացան պատասխանել: Նրանք ասացին. «Գիտենք, որ սա մեր որդին է, բայց թե ինչպե՛ս է բժշկվել, մենք չգիտենք»: Որովհետև հրեաները ասել էին, որ եթե մեկը Նրան Մարգարե խոստովանի, հեռացվի ժողովարանից:

55 Բայց տեսե՛ք, Աստծո գործն այն էր, որ այս տղան չէր պատկանում այն խմբին: Նա ասաց. «Զարմանալին էլ այն է, որ դուք չգիտեք, թե այդ Մարդը որտեղից է, իսկ Նա իմ աչքերը բացեց»: Տեսնո՞ւմ եք: Նա կարող էր դա ասել: Հասկանում եք, դա Աստծո գործն էր: Նա բժշկվել և առողջացել էր, և նա կարող, նա կարող էր դա ասել, որովհետև ոչ մի բանի հետ կապված չէր: Հենց իր համար էր կատարվել այդ գործը, և նա, անշուշտ, տեսնում էր... առաջին անգամ իր կյանքում:

56 Հիմա, հրեաները միավորվել էին Հիսուսի դեմ և, և Նրա Մեսիայական ծառայության և պատգամի դեմ: Մենք հիմա տեսնում ենք, որ նույն բանն է կատարվում, ճիշտ նույն բանը: Կոմունիզմը միավորվում է, որ կործանի եկեղեցուն, և միակ ձևը, որով դա... այն բանից հետո, երբ եկեղեցին նույնպես միավորվում է Եկեղեցիների Խորհուրդում՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդում, որ մերժի և ոչնչացնի պատգամը՝ Խոսքը: Նրանք՝ երեկեցիները, մերժել են Խոսքը: Նրանք չեն կարող Այն ընդունել, որովհետև դա իրենց հարանվանական հավատամքին դեմ է: Կարևոր չէ, թե ինչքան Կրակի սյուներ կարող են լինել այդ մարդկանց մեջ, թե ինչքան մարդիկ կլինեն... ինչքան իրադարձություններ կարող են կանխասվել և իրականանալ, և բոլոր այս մեծ նշանները, որոնք Նա խոստացել է վերջին օրերում. նրանք չեն կարող դա ընդունել:

57 Դրա համար հիմա նրանք միավորվում են, որի մասին այստեղ ներկա ձեր հովիվը և շատերը կարող են ձեզ ասել՝ կարդալով որ նրանք... աշխարհում էկումենիկ շարժման վերաբերյալ: Եվ... դա կատարվում է մի յուրթերական ծառայողի գլխավորությամբ: Որ, եթե մի աղետ լինի մոտակայքում, ու եթե մենք միացած չենք էկումենիկ շարժմանը, մեր եկեղեցին այլևս եկեղեցի չի համարվի, և նրանք այն կարող են օգտագործել որպես պահեստ: Կամ եթե եղբայրներից մեկը տեսնի,

որևէ մահամերձ կամ վիրավոր մարդու և ցանկանա նրան օգնել որևէ հոգևոր օրհնությամբ, նրան կկրակեն դրա համար: Դա ճշմարտություն է: Մենք կարող ենք տաս տարով բանտարկվել որևէ մեկին օգնելու համար, որովհետև էկումենիկ շարժման անդամ չենք: Չե՞ք կարող զանազանել գազանի դրոշմը: Տեսնո՞ւմ եք: Տեսնո՞ւմ եք:

58 Հիմա, մենք տեսնում ենք, որ այս միության ժամանակը մոտենում է: Հասկանո՞ւմ եք: Այժմ նայե՛ք: Եկեղեցին միավորվել է պատգամի դեմ, և մինչ նա դա անում է, ազգերն էլ միավորվում են կոմունիզմի մեջ՝ եկեղեցին նորից կործանելու համար: Ճիշտ այնպես, ինչպես արեց առաջին անգամ: Հասկանո՞ւմ եք: Ամեն բան նորից կրկնվում է:

59 Իսրայելը նախ պետք է մերժեր պատգամը: Եվ երբ նրանք պատգամը մերժեցին, այն ժամանակ ռազմական, մյուս ազգերը միավորեցին իրենց ազգային ուժը, մտան եկեղեցի և կործանեցին այն: Եվ այսօր նրանք մերժել են Տեր Հիսուսի պատգամը, մերժել են: Իսկ հիմա եկել է ժամանակը, երբ կոմունիզմը աշխարհը միավորում է եկեղեցու դեմ: Հասկանում եք, պետք է այդպես լինի: Հիմա, հեշտ չէ դա ասելը:

60 Հրեաների համար դժվար էր հավատալ, նրանք ասացին. «Եկե՛ք եղբայրներ, մենք գիտենք, որ, որ մեր, մեր Աստվածը մեզ հետ է: Մենք, մենք կմտնենք տաճար և կաղոթենք, թող սուրբ հայր *Այսինչը* և սուրբ հայր *Այնինչը* մեզ առաջնորդի աղոթքում: Փակե՛ք դարպասները»: Բայց այդ ժամանակ Տիտոսը շրջապատեց քաղաքը և մնաց այնտեղ մեկ տարի կամ ավելի: Տեսնում եք, հսկում էր, և սովի դատապարտեց նրանց: Ոչ ոք չէր կարող նույնիսկ դուրս գալ քաղաքից, և նրանք սովից մահացան: Եվ երբ Տիտոսը մտավ քաղաք և կործանեց պարիսպները, արյունը ժայթքում և գետերի պես հոսում էր այնտեղ, որտեղ նա մորթեց այն ամենը, ինչ այնտեղ էր:

61 Մինչդեռ Հին Կտակարանում Տիրոջ հրեշտակը մարգարեացել էր դրա մասին, և ասել էր, որ դա կատարվելու է: Իսկ նրանց ծառայողները, ովքեր հոգևորականներ էին, ովքեր նշանակված էին որպես դիտորդ՝ ժողովրդին զգուշացնելու համար, դրա փոխարեն, երբ Հիսուսը կանգնեց նրանց մեջ, նրանք նույնիսկ չընդունեցին Նրան. փորձեցին... աճպարարի տեղ դնել. «Մեզ մի հնարք ցույց տուր, տեսնենք, թե

ինչպես, թե ինչպես է դա արվում: Նշան ցույց տուր»: Տեսնո՞ւմ եք:

Բայց Նա ասաց. «Ես...»: Մինչդեռ Նա այնքան բաներ էր արել, իսկ նրանք դա չէին տեսնում: Հասկանո՞ւմ եք: Հետո, երբ նրանք մերժեցին Նրան որպես իրենց... այդ օրվա պատգամը, նրանք մերժեցին այդ օրվա պատգամը:

62 Նրանք չկարողացան տեսնել օրվա նշանը: Աստվածաշնչյան մարգարեության նշանը դրսևորվեց նրանց առջև, իսկ նրանք ասացին. «Գնանք տաճար»: Մինչդեռ նրանք սուրբ մարդիկ էին: Նրանց կյանքում չկար որևէ բան, որին կարող էին մատնացույց անել: Նրանք չէին կարող *վատ բան* անել և հետո, և հետո մնալ քահանա: Մի փոքրիկ սխալի համար քահանային կսպանեին, նրան կքարկոծեին մինչև ի մահ: Դրա համար նա պետք է մաքուր, սուրբ կյանքով ապրեր: Նա չէր կարող դա անել, որովհետև ցանկացած արարքի համար նրան կքարկոծեին: Դրա համար ժողովուրդի աչքերում նրանք մեծ մարդիկ էին, սուրբ մարդիկ, և այնուամենայնիվ նրանք մտան և ասացին. «Հիմա մենք... Մենք Աստված ունենք, Աստված, ով մեզ հետ է եղել բոլոր դարերի ընթացքում: Գնանք Նրա սուրբ տաճարը»: Եվ դա իրոք Աստծո սուրբ տաճարն էր: Բայց տեսե՛ք, հենց Իր սուրբ տաճարում մերժեցին Նրան: Հասկանո՞ւմ եք: «Մենք կգնանք Տիրոջ տունը: Հիմա, դուք՝ բոլոր հրեաներդ գիտեք, որ մենք ընտրյալ ցեղ ենք, մենք, այստեղ: Եվ Աստվածը մեր Աստվածն է. Արբահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը: Նա մեզ հետ է: Նա մեզ կազատի այս անթլփատ փղշտացիներից (ինչպես որ էր) այս հռոմեացիներից և հույներից: Նա մեզ կազատի դրանից: Գնանք Տիրոջ տունը»:

63 Շատ լավ է հնչում, բայց ի՞նչ արեցին նրանք: Տան Ճարտարապետն այնտեղ էր՝ գալիլիացի խոնարհ հյուսնի տեսքով, և նրանք մերժեցին Նրան: Երբ Աստված հաստատեց Նրան, որ Նա էր այդ ժամի Պատգամաբերը, Ճյուղը, նրանք մերժեցին Նրան: Դրա համար այդ բոլոր աղոթքները, այդ ողջ անկեղծությունը, բոլոր զոհերը ոչինչ չէին նշանակում Աստծո համար: Նրանք մերժեցին Նրան: Դրա համար Աստված թույլ տվեց, որ այդ մեծ զորքերը միավորվեն նրանց կործանելու համար:

64 Եվ այսօր տեսնում ենք, թե ինչպես եկեղեցիները հարանվանություններով և այլ բաներով մերժում են Աստծո Խոսքը: Նրանք չեն ուզում, որ դուք խոսեք

այս բաների մասին: Գիտությունն էլ կարող է դա ապացուցել լուսանկարների և նման բաների միջոցով, այնուամենայնիվ նրանք չեն ուզում Դրա հետ որևէ գործ ունենալ: Դրա համար կոմունիզմը կազմավորվում է, որ կործանի նրանց, ճիշտ ինչպես Տիտոսն արեց, և Աստվածաշունչն է ասում, որ նրանք կանեն դա: Հենց այդպես է:

65 Հիմա տեսնո՞ւմ եք, թե մենք որտեղ ենք ապրում: Սա միության ժամանակն է: Երբ տեսնում ենք, թե ինչպես են այս բաները միավորվում: Ո՛հ, ինչո՞ւ մենք չենք կարողանում տեսնել այդ բաները: Դուք կարող եք, կարող եք նայել Սուրբ Գրքում և տեսնել, թե որտեղ է Նա խոստացել այն, ինչ անելու է: Հիմա, մենք տեսնում ենք, որ դա կատարվում է: Մենք տեսնում ենք եկեղեցում այն, ինչ Նա խոստացել է անել. մենք տեսնում ենք, որ դա կատարվում է: Մենք տեսնում ենք, որ ազգերը միավորվում են: Մենք տեսնում ենք, որ «իզմ»-երը միավորվում են: Մենք տեսնում ենք, որ եկեղեցիները միավորվում են: Սա միության ժամանակն է: Սա միության ժամն է: Սա այս դարի հոգին է՝ «Մենք պիտի միավորվենք»: Այն ամենը, ինչի մասին խոսում ես, պետք է կազմակերպության մեջ լինի: Նույնիսկ կառավարություններն են դա ընդունում:

66 Դուք գիտեք, որ որպես քաղաքացի... Ես չեմ կարող որպես քաղաքացի՝ որպես Միացյալ Նահանգների քաղաքացի մինչդեռ ես, ես... եթե դուք ինձ տաք հինգ դոլարի չեք, ես չեմ համարձակվի այն ստորագրել իմ անունով: Հը՛մ: Տեսնում եք, ես չեմ կարող այդ անել: Հասկանում եք, սա միության ժամանակն է: Այս կամ այն կերպ ամեն բան պիտի արվի միության միջոցով, և այդ միությունն է, որ բերելու է գազանի դրոշմը: Հասկանո՞ւմ եք: Սա միության ժամանակն է, և ամեն բան աշխատում է այդ ուղղությամբ: Դուք դա կարող եք տեսնել սեփական աչքերով, եթե նայեք: Սա միության ժամանակն է, երբ ամեն բան միավորվում է:

67 Հրեան, հրեաները միավորվեցին Հիսուսի դեմ, որպես նրանց, որպես նրանց Մեսիայի: Դրա համար տեսնում ենք, թե ինչ կատարվեց: Նույն բանն էլ հիմա ենք տեսնում. կոմունիզմը միավորում է, որ կործանի եկեղեցուն, այն բանից հետո, երբ եկեղեցին միավորվեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում, որ ոչնչացնի պատգամը, Աստծո Խոսքը: Նրանք ջանում են ազատվել Դրանից:

Միակ բանը, որ նրանք կարող են անել, խորհուրդ ստեղծելն է, որովհետև նրանք բաժանված են: Մի փոքրիկ խումբ այստեղից, այնտեղից՝ մեթոդականներ, մկրտականներ, յութերականներ, երիցականներ, Քրիստոսի Եկեղեցի և այլն: Նրանք չեն կարող ոչինչ անել, որովհետև *այս* մեկն *այն* մեկի դեմ է, *այս* մեկն *այն* մեկի հետ համաձայն չէ, նրանց ուսմունքները նույնքան տարբերն են, որքան արևելքն արևմուտքից: Հասկանում եք, նրանք չեն կարող անել այդ: Բայց հենց միավորվեն հզոր ղեկավարի ներքո, կունենան այն, ինչ իրենց պետք է: Այն ժամանակ կունենան:

68 Դրա համար են կաթոլիկները՝ հռոմեացի կաթոլիկներն այդպիսի միության մեջ, անշուշտ, նրանք միության մեջ են, նրանք... ճնշող մեծամասնությունը հռոմեական կաթոլիկներն են: Հույները և մյուս կաթոլիկներն այնքան միավորված չեն, ինչքան հռոմեական կաթոլիկները: Հիմա նրանք միավորվում են, դրա համար կանգնած են միասին: Ինչ էլ պատահի, պապն է գլխավորում այդ ամենը: Հասկանո՞ւմ եք: Կարևոր չէ, թե ինչ–որ մեկն ինչ է ասում. «Նա անսխալական է, նա, նա, նա Աստծո փոխանորդն է և վերջ: Նա հաջորդն է Աստծուց հետո: Նա իշխանություն ունի դժոխքի, երկնքի և քավարանի վրա»: Հասկանո՞ւմ եք: Հետևաբար *այդ* դեպքում ոչինչ չես կարող անել, ինչ ասի, այդպես էլ պետք է արվի:

69 Հիմա, բողոքականները նույնպես այդպիսի գլուխ են կարգում իրենց վրա: Մի՞թե Սուրբ Գիրքը չի ասում, որ գազանի պատկերը շինվեց: Ի՞նչ է պատկերը: Դա նմանություն է, նմանությամբ շինված մի բան: Ահա՛ խնդրեմ, նույն բանն է: Ինչպե՞ս է դա արվում: Միավորելով, և սա դարի հոգին է՝ *միությունը:*

70 Հիմա նրանք միավորվում են, որ ոչնչացնեն պատգամը: Ինչպե՞ս են ոչնչացնում: Ինչպե՞ս կարող են նրանք ոչնչացնել Աստծո Խոսքը: Այն կարող են դարձնել անարդյունավետ, ոչ արդյունավետ, ընդունելով ավանդույթները, ինչպես սկզբում էին անում՝ Աստծո Խոսքն անարդյունք դարձրնելով: Հասկանում եք, նրանք ասում են. «Ո՛հ, դա... մի՞թե ամեն բանից հետո...»: Տեսնում եք, երբ այն անհավատ կինը, որ փորձում էր... նա... հիմա մոռացել եմ նրա անունը, որ պարզապես կանչեցի նրան: Նա... Այնքան բաներ կա, որոնց մասին միաժամանակ մտածում եմ:

71 Վերջերս մտածում էի տիկին Նեյշնի մասին: Կուզեի, որ նրա նմաններն էլի լինեին: Այդ նա էր, որ մտավ բարերը և պատռեց վիկսիի գովազդային պաստառները և դեն նետեց ցուցանակները ու նման բաները: Ինչո՞ւ այսօր չի բարձրանում այդպիսի մի կին, ով կգնար այնտեղ և կպատռեր իր ազգի մերկ կանանց նկարները և նման բաները: Այլևս այդպիսիները չկան:

72 Բայց այս անհավատ կինը, ով ասել էր, որ, որ՝ «Պետական դպրոցներում Աստվածաշունչ կարդալը հակառակ է սահմանադրությանը», և նման բաներ:

73 Հիմա նրանք նաև... նկատել եք, հիմա նրանք փորձում են ասել, ինչպես նաև Աստվածաշնչի մեծ գիտնականներ, ասում են, որ՝ «Աստվածաշնչի մարգարեությունների մեծ մասը բացարձակ սխալ են եղել և երբեք չեն իրականացել»: Դուք էլ լսել և կարդացել եք դրա մասին: Նրանք ամեն բան կասեն. հասկանում եք, նրանք փորձում են ոչնչացնել Խոսքի ազդեցությունը: Եթե նրանք կարողանան ոչնչացնել և փոխարինել Դա հավատամքով կամ այլ մարդկային բաներով, դա իրենց աչքերում ավելի լավ է թվում, քան Խոսքը, այդժամ նրանք ոնչացնում են Դա իրենց, իրենց ավանդույթներով; Այդպես իրենց հարանվանական քաղաքականությամբ փորձում են ոչնչացնել Աստծո Խոսքը:

74 Ամեն եկեղեցի ունի իր սեփական քաղաքականությունը: Քրիստոսի եկեղեցին ունի իր քաղաքականությունը, քրիստոնեական եկեղեցին՝ իրենը, մկրտականները, մեթոդականները, երիցականները նույնպես: Բոլորն ունեն իրենց տարբեր քաղաքականությունները: Հիմա նրանք հեռանում են դրանից, որովհետև բաժանված են: Հասկանում եք, առաջ նրանք չէին կարող դա անել, հիմա պետք է այդ անեն: Տեսնում եք, հիմա միության ժամանակն է, և նրանք միավորվում են, միավորում են իրենց ջանքերը, որ տեսնեն, թե ինչ դուրս կգա: Կարծես հաց թխես ձիու մսով, աղբամանից աղբ ավելացնես, և այն, ինչ նրանք ընդանուր ունեն, խառնես այն, նաև մի քանի նեխած կարտոֆիլ, հետո տեսնես, թե ինչ դուրս կգա: Ես հաստատ այդ ճաշից չեմ ուտի: Ո՛չ, պարո՛ն: Բայց նրանք հենց այդպես են անում: Հասկանում եք, նրանք ուզում են միավորել մարդկանց, ովքեր հավատում են, որ Հիսուսը առասպել էր, մի եկեղեցու, որը հավատում է, որ Հիսուսն առասպել էր, այն եկեղեցու հետ, որը հավատում է, որ Նա

մարգարե էր։

75 Մեկն ասում է. «Հրաշքների ժամանակներն անցել են»։

76 Մյուսն ասում է. «Իսկ գուցե դրանք դեռ կան»։

77 Եվ այս ամենը միասին։ Աստվածաշունչն ասում է. «Մի՞թե երկուսը միասին կքայլեն, եթե համաձայնած չլինեն»։ Տեսնո՞ւմ եք։ Ահա, թե ինչպիսին է նրանց միությունը։ Եվ այդ ամենի ղեկավար են կարգում ինչ–որ սուրբ հոր, և ահա գազանի դրոշմը, ճիշտ այնպես, ինչպես ասում է Աստվածաշունչը։ Հիմա նրանք ղեկավար են կարգել մի լյութերական ծառայողի։ Մենք տեսնում ենք, որ սա միության ժամանակն է։ Նույն բանն էլ հիմա է, կոմունիզմը և ամեն բան միավորվում են. աշխարհում, եկեղեցում և ամենուր միավորվում են։

78 Նայե՛ք բնությանը։ Ո՛հ, Աստված իմ։ Եթե պարզապես նայեք բնությանը, կտեսնեք, որ նույն բանն է անում։ Բնությունը Աստծո օրացույցն է նշանների տեսքով։ Գիտեի՞ք դա։ Հիսուսը նրանց ասաց, որ նայեն բնությանը։ Ծովը պիտի փոթորկվի, հասկանում եք, տարբեր բաներ են լինելու, տարբեր վայրերում երկրաշարժեր պիտի լինեն, ազգերը միմյանց դեմ դուրս կգան, նշաններ կլինեն երկնքում և երկրի վրա։ Ամեն տեղ կլինեն նշաններ, որոնք կազդարարեն այդ ժամանակների գալուստը։

79 Նայե՛ք ամպերին։ Նախքան ամպերը կկարողանան անձրև առաջացնել, գիտե՞ք, թե ինչպես է դա կատարվում։ Մի քանի փոքրիկ ամպեր միավորվում և մի մեծ ամպ են կազմեն։ Ահա փչում է մի թեթև քամի, հետո մեկ ուրիշ թեթև քամի, հետո բոլորը միավորվում են և փոթորիկ է լինում։ Տեսնո՞ւմ եք։ Նրանք միավորվում են, նախքան փոթորիկ առաջացնելը։ Նրանք պետք է միավորվեն։

80 Տեսնում եք, թե ինչպես են բադերն ու սագերը հավաքվում իրենց հայրենիքը լքելուց առաջ։ Տեսնո՞ւմ եք։ Նրանք բոլորը միասին հավաքվում են։ Տեսնում եք, թե ինչպես են նրանք լճակից լճակ թռչում, այստեղից այնտեղ, նրանք բոլորը միասին հավաքվում են։ Նրանք հավաքվում են և պատրաստվում թռիչքին։ Հասկանում եք, սա ուղղակի… բնությունն է, իսկ բնությունն Աստված է ստեղծել, և բնությունը գործում է Աստծո ձրագրի համաձայն։ Դա օրենք է, Աստծո չգրված օրենքը, որ բնությունը գործում է Իր օրենքի համաձայն։

81 Ինչպես հուղարկավորության ժամանակ են ասում. բուսահյութն իջնում է գերեզման, իջնում է մինչև ծառի արմատների խորքը, մնում է այնտեղ մինչև գարնան հարությունը: Սա Աստծո օրենք է: Ոչ մի իմաստություն չի կարող այդ բուսահյութը իջեցնել այնտեղ, ոչ էլ հանել, չես կարող կթել: Չկա դա անելու ավելի լավ միջոց, քան Աստված է անում: Աստված գիտի ամեն բան անելու կատարյալ ձևը: Դրա համար երբ տերևները թափվում են, Նա բուսահյութն ուղարկում է գերեզման և թաքցնում է այն: Ինչպես Հոբն էր ասում. «Թաքցրո՛ւ ինձ գերեզմանում մինչև Քո բարկությունն անցնելը»: Տեսնո՞ւմ եք: Բուսահյութն իջնում է այնտեղ սառնամանիքից առաջ, որովհետև դա բնության օրենքն է: Նայե՛ք տերևներին, որ հիմա սկսվում են թափվել: Ինչո՞ւ: Դա բնության օրենքն է:

82 Բադերը՝ նրանցից ամեն մեկը, հավաքվում է մի առաջնորդի շուրջ: Ինչ-որ ձևով նրանք իմանում են, թե ինչպես են այդ անում, ես չգիտեմ, բայց նրանք գիտեն, որ իրենց առաջնորդը հենց այդ բադն է: Այդ փոքրիկ արարածները՝ նրանք հավաքվում և համախմբվում են նրա շուրջ և թռչում են օդերում: Նա... երբեք չի հեռացել իր լճակից, բայց կթռչի և կգնա ուղիղ Լուիզիանայի կամ Տեքսասի բրնձի դաշտերը: Տեսնում եք, մինչև չվելը, իրենց տունը լքելը, որտեղ ծնվել են այդ տարի, նրանք միավորվում են: Ամե՛ն: Ահա՛ խնդրեմ: Նրանք հավաքվում են իրենց առաջնորդի շուրջ:

83 Մարդու խնդիրն այն է, որ չի ճանաչում իր առաջնորդին: Այո՛, պարո՛ն: Նրանք հավաքվում են հարանվանության, եպիսկոպոսի, որևէ մարդու շուրջը, բայց չեն ոգում հավաքվել Առաջնորդի՝ Սուրբ Հոգու և Խոսքի շուրջը: Հասկանո՞ւմ եք: Նրանք ասում են. «Ես վախենում եմ, որ մի քիչ մոլեռանդ կդառնամ, ես վախենում եմ, որ սխալ քայլ կանեմ»: Ո՛հ, ահա՛, խնդրեմ: Ի՞նչ կլներ, եթե բադիկն ասեր. «Ինձ դուր չեն գալիս նրա փետուրները: Չեմ կարծում, որ կթռչեմ նրա հետ»: Ցրտից կսատկեր: Դուք կմնաք սառույցների մեջ, եթե մյուսների հետ ժամանակին չթռչեք: Նրանք բոլորը միավորվում են: Բնությունն էլ է այդպես անում:

84 Սագերը նույնպես միավորվում, հավաքվում են իրենց առաջնորդի շուրջը: Նրանք էլ նույն բանն են անում:

85 Երբևէ ուշադրություն դարձրե՞լ եք, թե ինչպես են մեղուները պարս կազմում: Պարս կազմելուց առաջ

մեղուները հավաքվում են իրենց թագուհու շուրջը: Դա ճիշտ է: Ուր նա գնա, նրանք հետևում են իրեն: Այո՛: Ի՞նչ են անում նրանք: Նրանք միավորվում են պարս կազմելուց առաջ: Ճիշտ է: Բնությունն է այդպես անում:

86 Ձկները հավաքվում են իրենց գարնանային գաղթից առաջ: Օվկիանոսում կարող եք տեսնել այդ մեծ... ինչպես մենք ենք ասում «սապատաձկներին»՝ սաղմոններին: Գաղթից առաջ, երբ նրանք այնտեղ են, տաս տասնյակ հազարավորներ կարող եք տեսնել շրջում են և շրջում աղի ջրում, բայց իրականում նրանք քաղցրահամ ջրում ապրող ձկներ են: Նրանք վերադառնում են քաղցրահամ ջրի մեջ ձկնկիթ դնելու ժամանակ: Նրանք մոտավորապես չորս տարին մեկ գնում են այնտեղ և ծկնկիթ են դնում, և ձկնկիթ դնելուց հետո սատկում են: Նրանք գիտեն, որ գնում են այնտեղ սատկելու, բայց ոչինչ չի կանգնեցնի նրանց: Նրանք անցնում են ձկնանցարաններով և նման բաներով, որ հասնեն այնտեղ, թեև գիտեն, որ սատկելու են: Բայց բնության օրենքը ստիպում է նրանց, գիտեն, որ գնում են այնտեղ, որ հորում ծկնկիրթ դնեմ և սատկեն: Հետո ծնվում են փոքրիկ ձկնիկները, և ինչ-որ բան նրանց հավաքում է, և բոլորը միասին գնում են օվկյանոս: Դա միություն է: Դա օրենք է: Աստծո օրենքը չես փոխի:

87 Ազգերը մասնատվում են, որովհետև հիմա է ժամանակը, որ, մենք տեսնենք, որ, որ նրանք պետք է դա անեն: Մենք ազգային խռովության ընթացքի մեջ ենք: Մենք տեսնում ենք, որ ազգերը խզում են հարաբերությունները: Տարեց տարի տեսնում ենք, որ *այս* ազգը կլանվում է կոմունիզմով. *այն* ազգը կլանվում կոմունիզմով: Եվ հենց այստեղ՝ մեր սեփական ազգում, այն պատված է կոմունիզմով և կոմունիզմը կիշխի: Հասկանում եք, այն կիշխի, և ոչինչ չի կարող դա կանգնեցնել: Ինչո՞ւ: Հենց այն պատճառով, որով հնարավոր չեղավ կանգնեցնել Տիտոսին: Մարդիկ մերժեցին Աստծուն և Իր Խոսքը: Այո՛, պարո՛ն, այդ պատճառով դա կկատարվի, և մենք տեսնում ենք, որ դա արդեն ընթացքի մեջ է:

88 Սովորաբար ինձանից երկու ժամ է պահանջվում, իսկ ես մինչև այս պահը մոտ կես ժամ է, որ խոսում եմ: Տեսնո՞ւմ եք: Փորձում եմ այդ ամենի մասին արագ խոսել: Երբ տուն հասնեք, ուսումնասիրեք այն:

89 Դուք նկատում եք, որ հիմա նրանք միավորվում են: Դուք ինձ կասեք. «Բրանհամ եղբայր, դա ճի՞շտ

է»: Նրանք կգան Արմագեդոնի ճակատամարտին: Հենց այդպես էլ կանեն: Հասկանո՞ւմ եք: Դրա համար են նրանք հիմա միավորվում: Դրա համար Կա ՄԱԿ-ը և այդ բոլոր բաները: Արևմտյամ աշխարհը միավորվում է արևելյան աշխարհի դեմ, կոմունիզմը և այլն, այս ամենը միավորվում է: Եկեղեցիները միավորվում են: Թվում է, որ ամեն բան միավորվում է: Մրավորվում են, նրանք միավորվում են, մենք դա տեսնում ենք:

90 Ահա թե ինչու ազգերի միության ժամանակ երևում են ազգերի նշանները՝ ամենուրեք տեսնում ենք երկրաշարժեր և բոլոր այն բաները, որոնք միությանն են նպաստում: Միավորում են աշխարհը, մարդկանց, բոլոր եկեղեցիներին, միավորում են ամեն բան: Եվ մինչ տեղի է ունենում այս միությունը, մեկ ուրիշ միություն է իրականանում: Ամե՛ն: Դրա վրա եմ ուզում հիմա հրավիրել ձեր ուշադրությունը:

91 Աստված միավորում է Իր Հարսին: Նա հավաքվում է արևելքից և արևմուտքից, հյուսիսից և հարավից: Կա միության ժամանակ, և դա հիմա է կատարվում: Ի՞նչ նպատակով է Հարսը միավորվում: Հափշտակության համար: Ամե՛ն: Աստված պատրաստում է Նրան: Այո՛, պարո՛ն, միավորում է: Ինչի՞ հետ է միանում Հարսը: Խոսքի հետ: «Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Իմ Խոսքերը չեն անցնի»: Նա միանում է ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ Խոսքի հետ, անկախ նրանից, թե որևէ հարանվանությունը կամ որևէ մեկն ինչ է ասում: Նա միավորվում է, պատրաստվում է: Ինչո՞ւ: Որովհետև նա Հարսն է: Դա ճիշտ է: Եվ Նա միանում է Իր Փեսայի հետ, հասկանում եք, իսկ Փեսան Խոսքն է: «Սկզբում էր Բանը՝ Խոսքը, և Բանը Աստծո մոտ էր և Բանն Աստված էր: Եվ Բանը մարմին եղավ և մեր մեջ բնակվեց»:

92 Եվ Եկեղեցին՝ Հարսն ու Խոսքն այնքան մեկ են դառնում, որ Խոսքն Ինքը իրաանացնում է Փեսայի գործերը: Ամե՛ն: Ըմբռնո՞ւմ եք դա: Միություն: Այլևս ոչ մի. «Միացե՛ք եկեղեցուն», ոչ մի *նման* բան, այլ փախեք այդպիսի բանից և կառչեք Հիսուս Քրիստոսից: Հասկանո՞ւմ եք: Սա միության ժամանակն է: Աստված հավաքում է Իր Հարսին և վերականգնում է նրան: Հենց այդպես է: Միացնում է Իր խոստումի խոսքերը:

93 2 Թեսաղոնիկեցիս 2-րդ գլուխ, ասվում է, 5-րդ գլխում ասվում է. «Նախ երկրի հողի մեջ ննջող սուրբերը հարություն կառնեն: Եվ հետո մենք կմիանանք նրանց

հետ (ողջ մնացածներս մեռածների հետ), կհավաքվենք Այնտեղ բարձրանալուց առաջ», որովհետև Հարսը կատարյալ է լինելու բարձրանալուց առաջ: Ողջերը, որոնք միացած են Խոսքի հետ, և մեռածները, որոնք միացած են Խոսքի հետ կհավաքվեն և մեծ խումբ կկազմեն Այնտեղ բարձրանալուց առաջ: Ամե՛ն:

94 Կոմունիզմը պետք է բարձրանա, մյուս բաները պետք է բարձրանան, եկեղեցին էլ պետք է միավորվի, երբ այդ... և ազգերն այնտեղ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդի համար. Հարսն էլ պետք է միավորվի Աստծո Խոսքի ներքո: Որպեսզի դա կատարվի Աստված երկնային նշանն ու մնացած բաները ուղարկեց որ ապացուցի եկեղեցուն ու ազգերին... Ամեն:

95 Աստծո միության ժամանակն է: Այո՛, պարո՛ն: Ո՛հ, Աստված իմ: Հիմա, հիշե՛ք, որ կա Խոսքով միաբանություն (կրկին միավորում է), որը տանում է «սուրբերին մեկընդմիշտ ավանդված հավատքին»: Վերականգնել: Դա կարող էր կատարվել միայն այս օրերում: Միակ ժամանակը, որ այն կարող էր կատարվել հիմա է: Նախկինում երբեք այդպիսի հարձակում չէր եղել: Ամեն ինչ ավարտվում էր հարանվանական խնջույքներով: Բայց հիմա այլևս հարցը հարանվանական խնջույքները չեն, որովհետև ժամանակն է, որ ամեն ազգից, գույնից, ամեն դավանանքին պատկանող տղամարդիկ և կանայք, ամեն բան միանան Քրիստոսի ներքո Սուրբ Հոգու մկրտությամբ և վերադառնան Խոսքին:

96 Եկեղեցու համար միավորման ժամն է: Ո՛հ, Աստված իմ: Ժամանակն է միավորելու ամեն մի Խոսքը, որը ցրվել է ամենուր այս կազմակերպությունների կողմից՝ Նիկեայի ժամանակներից սկսած, Հռոմում, երբ նրանք կազմակերպեցին առաջին եկեղեցին, և կազմակերպություն դարձրին Լյութերի եկեղեցին, Ուեսլեյի եկեղեցին և մնացած բոլոր եկեղեցիները: Եվ այդպես անելով, նրանք հավատո հանգանակ էին ընդունում, և երբ Աստված ինչ–որ ուրիշ բան էր ուղարկում, նրանք չէին կարողանում Դա ընդունել: Դրա համար մինչև այսօր այդ միությունը հնարավոր չէր: Բայց Աստված խոստացել էր, որ վերջին օրերում «հայրերի հավատքը կվերականգնվի Հարսի մեջ», խոստացել էր, որ այսպես է լինելու, և դա չէր կարող կատարվել ուրիշ ոչ մի ժամանակաշրջանում: Տեսե՛ք, թե ինչ նշան է երկնքից, թե ինչպես է Կրակե սյունը կախված մեր մեջ, և Տեր Հիսուս

Քրիստոսի նշաններն ու հրաշքները: Եվ երբ Նա խոսում է մեզ հետ, այն երբեք չի ձախողվում մինչև վերջին կետը: Ամե՛ն: Այդ ժամանակ մենք տեսնում ենք, թե որտեղ ենք կանգնած: Հիմա միության ժամանակն է:

97 Մենք տեսնում ենք, որ ազգերը միավորվում են, աշխարհը միավորվում է, տեսնում ենք, որ կոմունիզմը միավորվում է, եկեղեցիները միավորվում են: Բայց տեսնում ենք նաև, որ Աստված միավորվում է Իր Հարսին, մինչև Ինքն ու Եկեղեցին մեկ լինեն: Ալելո՛ւիա: Բուրգի նման: Ճիշտ է: Նրանք միավորվում են. Աստված է միավորում: Ինչո՞ւ: Նախկինում երբեք՝ եկեղեցու առաջին շրջաններից սկսած, Կրակի սյունն ադպես չի եղել ժողովրդի մեջ: Նախկինում երբեք՝ եկեղեցու առաջին շրջանից սկսած, նրանք չեն տեսել այն բաները, որոնք մենք տեսնում ենք այսօր: Եվ դա հնարավոր դարձավ միայն այն ժամանակ, երբ Աստված ուղարկեց յոթ կնիքները և Դրանց միջոցով մեզ նշան տվեց, և երկնքից յոթը հրեշտակներին ուղարկեց: Դա կատարվեց հավաքելու համար Խոսքը, որը ցրվել էր հարանվանություններում, որ միացնի մեզ Աստծո Խոսքի հետ, որ Սուրբ Հոգին իջնի:

98 Հիսուսն ասաց. «Եթե դուք Իմ մեջ մնաք և Իմ Խոսքերը ձեր մեջ մնան, ինչ էլ, որ կամենաք, կխնդրեք, ու կլինի ձեզ»: Միավորում է Հարսին Խոսքի հետ, որն Աստված է: Եկեղեցին և Խոսքը, ոչ թե Եկեղեցին և հավատո հանգանակը, Եկեղեցին և Խոսքը. Հարսն ու Խոսքը միավորվում են: Ո՛հ, Աստված իմ: Ի՞նչ... Ի՞նչն է վերականգնվելու: Պենտեկոստեի հայրերի սկզբնական հավատքը, հասկանում եք, որը ցրվել է Լյութերի խմբի կողմից: Ոչ թե Լյութերն ինքը. ոչ Լյութերի, ոչ Ուեսլեյի և ոչ էլ այդ հզոր հիմնադիրների կողմից: Բայց նրանց հեռանալուց հետո եկեղեցիներ հիմնվեցին և նրանք... հետո ինչ արեցին դրա հետ, այն վերածեցին կազմակերպության: Հավատո հանգանակներ ընդունեցին և նման բաներ ու շեղվեցին: Նայե՛ք նրանց այսօր, հիմա նրանք մտել են Եկեղեցիների այդ համաշխարհային խորհրդի մեջ:

99 Հիմա, դուք տեսնում եք... բայց վերջին օրերում մենք տեսնում ենք բաներ, որոնք նախկինում երբեք չեն կատարվել: Տեսնում եք, սա Աստծո նշանն է, և բոլոր այս միությունները ժամանակի նշանն են: Մենք հիմա ուզում ենք ուշադիր նայել դրան և վստահ լինենք,

որ հասկացել ենք: Թողնում են... նրանք թողնում են ճշմարիտ Խոսքը, որ ընդունեն հարանվանություններին: Նրանք ընդունում են հավատո հանգանակներ և տարբեր մարդկանց կարծիքները Խոսքի փոխարեն:

100 Հայտնության 10-րդ գլուխը խոսում է «յոթերորդ հրեշտակի պատգամի» մասին: Հիշե՛ք, որ դա կատարվում է, երբ յոթ փողերը հնչեցվել են: Մենք դա հիմա կտեսնենք: Բայց հիշեք այն համարը որտեղ ասվում է. «Հրեշտակի...», ոչ թե յոթերորդ հրեշտակի փողը, այլ «յոթերորդ հրեշտակի պատգամը»: Հասկանում եք, ոչ թե փողի հրեշտակը, այլ պատգամի հրեշտակը: Տեսնում եք, հրեշտակը՝ այդ յոթերորդ հրեշտակը միայն փողը հնչեցրեց: Բայց սա ասում է. «Յոթերոդ հրեշտակի պատգամի օրերում էր», հասկանում եք, երբ նրա պատգամն ավարտված է: Հասկանում եք, դա եկեղեցական ժամանակաշրջանի պատգամն է: Այս անգամ, այդ ժամանակ նա... պատգամը, ոչ թե փողը, և «Աստծո խորհուրդը (որ գրված է Խոսքում) կկատարվի»:

101 Տեսե՛ք, թե ինչ ժամանակներում ենք ապրում: Տեսեք, թե ինչպես են այդ Կնիքները հավաքել Աստծո ցրված Խոսքը, ինչպես են եկել Լյութերի ու մյուսների նման ռեֆորմատորները. վերադարցավ և Աստվածաշնչում ցույց տվեց, թե որտեղ էր նրանց տեղը, ամեն մարդու ճիշտ տեղը՝ թե ինչ պետք է աներ նա, թե ինչ պիտի լիներ եկեղեցու հետ, թե ինչ պետք է աներ նա և ինչ պիտի լիներ եկեղեցու հետ, թե որ բաները պետք է մի կողմ թողնվեին: Իսկ հետո, այս վերջին օրերում, երբ մենք ոչինչ չգիտեինք դրա մասին, Աստված մեզ նախապես հայտնեց, թե ինչ է կատարվելու: Թերթերն էլ խոսեցին այդ իրադարձության մասին, և իջնում, հայտնում է դա և իրար է կապում խորհուրդները: Ամե՛ն: Եղբայրներ, դա այնքան փառավոր բան է ինձ համար: Ինձ համար դա ողջ Խոսքը դնում է նուն գծի վրա: Ամե՛ն: Ինձ համար կարևոր չէ, թե ինչ, ինչ...Կարևոր չէ, թե մարդիկ ինչ են ասում, մտածում, ճիշտ է, բայց ինձ համար կարևորը Աստվածաշնչի Ճշմարտությունն է:

102 Մոգերի նման, որոնք գալիս էին Բաբելոնից, նրանք աղաղակում էին. «Որտե՞ղ է Նա, որ հրեաների թագավոր ծնվեց: Նա այս պահին երկրի վրա է: Մենք պետք է գտնենք Նրան»: Դա ճիշտ է: Եվ ես հավատում եմ, որ Նրա գալուստն այնքան մոտ է, որ կարող եմ ասել. «Ահա՛ Փեսան գալիս է: Ես լսում եմ կեսգիշերային աղաղակը»:

Ամե՛ն: Մենք ժամանակների վերջում ենք: Ո՛հ, եղբայրներ, ինչպիսի՞ ժամում ենք ապրում: Ուշադրություն դարձրեք: Հասկանո՞ւմ եք:

103 Ինչպիսի՞ օր է: Ինչպիսի՞ ժամանակներում ենք ապրում, Աստծո այս փառավոր խորհուրդն ավարտվում է: Աստծո բնությունն է ներկայացված, մեզ ցույց է տրված, թե ինչպիսին է Նրա բնությունը: Մենք տեսել ենք, թե ինչպես են այս փոքրիկ «իզմ»-երը բարձրացել և Նրան ներկայացրել *այս* կամ *այն* կերպ: Բայց Տիրոջ Հրեշտակն իջավ և երևան հանեց նրանց բոլոր «իզմ»-երը, հանեց Դրա միջից Ճշմարտությունը և ներկայացրեց Այն: Եվ ահա կատարյալ Ճշմարտությունը. ոչ ոք չի կարող կողքով անցնել: Ահա, մենք այն տեսնում ենք այնպիսին, ինչպիսին կա: Տեսե՛ք, օձի սերմը և բոլոր, բոլոր մյուս բաները, որոնք առեղծվածային էին թվում մարդկանց: Հասկանո՞ւմ եք: Ի՞նչ է սա: Նա... Այս ամենն ի՞նչի նշանն է. միության:

104 Ի՞նչ է ասում Մաղաքիայի 4-րդ գլխում. որ Նա վերականգնեցնելու է: Վերականգնեցնելու է Պենտեկոստեի սկզբնական հավատքը, վերադարձնելու է Պենտեկոստեի նույն պատգամը ժողովրդին, Պենտեկոստեի նույն նշանն ու ապացույցը: Նույն Աստվածն է, նույն զորությունը, նույն ուսմունքը, ամեն ինչ ճշգրիտ, Կրակի Սյան նույն հաստատումը, այն Կրակի սյան, որ հարվածեց Սողոսին Դամասկոսի ճանապարհին: Նա այսօր մեր մեջ է, անում է նույն բաները, որոնք նա արել է նախկինում: Միություն:

105 Մենք տեսնում ենք, որ ազգերը միավորվում են, աշխարհը միավորվում է, եկեղեցիները միավորվում են: Հարսը միավորվում է, միանում է Խոսքի հետ: Ինչո՞ւ: Որովհետև Խոսքն Աստված է: Եվ ինչպես Խոսքը... Ինչպես Փեսան (որը Խոսքն է), և Հարսը (որ լսում է Խոսքը) միանու են մեկ Միության մեջ: Միավորվում եմ ինչպես ամուսնության մեջ: Հասկանում եք, նրանք պատրաստվում են հարսանիքի օրվան, և նրանք, նրանք մեկ են դառնում: Խոսքը դառնում է դուք, և դուք դառնում եք Խոսքը: Հիսուսն ասաց. «Այն օրը դուք կիմանաք դա: Որ այն, ինչ Հայրն է, Ես եմ, այն, ինչ Ես եմ, դուք եք, այն, ինչ դուք եք, Ես եմ: Այն օրը կիմանաք, որ Ես Հոր մեջ եմ, Հայրն Իմ մեջ է, Ես ձեր մեջ եմ, և դուք Իմ մեջ եք»: Հասկանո՞ւմ եք: «Այն օրը»: Ո՞ր օրը: Ա՛յս օրը: Մենք տեսնում ենք, որ Աստծո այս մեծ թաքնված խորհուրդները բացահայտվում են: Ո՛հ, որքան եմ սիրում

սա։

106 Ո՛հ, նկատած կլինեք, որ նախկինում գիտությունն ու Խոսքը չէին կարող այդպես համատեղվել, ինչպես այսօր։ Առաջ չէին կարող. միայն այսօր է դա հնարավոր։

107 Ուշադրություն դարձրեք, որ Նա ասաց. «Նշաններ երկնքում, նշաններ երկնքում»։ Գիտությունը և ազգերի նշանները. այսօր մեծ նշաններ կան երկնքում, երկինք են ուղարկվում տիեզերագնացներ և ամեն տեսակ բաներ։ Բայց ի՞նչ են բերում տիեզերագնացները գիտական աշխարհին։ Այն վախ է բերում։ Ոչ ոք չգիտի, թե երբ կարող են այդպիսի մի բան ուղարկել և նետել այդ ռումբերը, որոնք մեզ լիովին կոչնչացնեն։ Հասկանո՞ւմ եք։ Ահա նրանց ունեցած նշանները՝ սարսափելի նշաններ երկնքում։ Հասկանո՞ւմ եք։ Նրանք ունեն դրանք՝ ատոմային հրթիռները և նման բաները, ամեն տեսակ նշաններ։

108 Դուք տեսաք, որ վերջերս նրանք ստորագրեցին այդ, այդ պայմանագիրը, որում ասվում է, որ այլևս ատոմային ռումբեր չեն պայթեցնելու մթնոլորտում։ Բայց փորձարկելու համար այնուամենայնիվ կպայթեցնեն ջրի մեջ կամ հողի տակ։ Տեսնո՞ւմ եք։ Նրանք պայմանագիր են կնքում ասելով՝ «Մենք դա չենք անի, եթե ասեք, որ դուք դա չեք անի (բայց մենք կվերադառնանք տուն և կանենք դա այդպես, որովհետև գիտենք, որ դուք էլ նույն բանն եք անում այնտեղ)»։ Տեսնո՞ւմ եք։ Ոչինչ չի մնացել, պարզապես... նրանց միջև նվազագույն վստահություն չկա, ոչինչ, ոչինչ չի մնացել։ Կարող եք... Հասկանո՞ւմ եք։ Եվ նրանք վախենում են միմյանցից։ Դա սարսափեցնող նշան է։

109 Գիտությունը, մարդիկ և ազգերը սարսափազդու նշաններ են առաջացրել երկնքում։ Դա կատարյալ ճշմարտություն է։ Հիմա, միմյանցից վախենում են։ Եվ երկնային նշան է տրվել... Տեսնում եք հիմա, մարդիկ նույնպես նշան ունեն երկնքում՝ սարսափեցնող նշան, մարդ–տիեզերագնաց։ Գուցե նա ատոմային հրթիռ ունի, որը կարող է գցել և ոչնչացնելմի ողջ ազգի։ Արբանյակով գնում են այնտեղ և մնում են վերևում։ Ոչինչ չի կարող նրանց արգելել։ Նրանք հաստատ կարող են դա անել, նրանք... ցանկացած պահի, երբ ուզենան։ Եթե ցանկանան, կարող են փոշիացնել ամեն ինչ, բայց... տասնհինգ րոպեում։ Եվ այն, ինչ մեկը կարող է անել, մյուսն էլ կարող է։ Հետևաբար տեսնում եք, որ

նրանք նշան ունեն, բայց այդ տեսակի նշանը վախ է առաջացնում:

110 Նրանք միավորվում են և միավորում են իրենց ուժերը: Ազատ աշխարհը... նրանք միավորում են իրենց ուժերը: Կոմունիզմը միավորում է իր ուժերը Ռուսաստանի հետ: Բոլորը, բայց մեկը մյուսից վախենում են: Տեսնում եք, դա սարսափազդու նշան է: Դա ճիշտ է: Սա ազգային նշան է:

111 Բայց եկեղեցին ստացել է երկնային նշան՝ Տիեզերագնա՛ց: Ամե՛ն: Հիսուս Քրիստոսը Կրակի այունի տեսքով, որը Հին Կտակարանում էր, որը հանդիպեց Սողոսին այնտեղ՝ Դամասկոսի ճանապարհին, այդ նույն Հիսուսն այստեղ է այսօր: Եվ ի՞նչ է Նա անում: Արդյո՞ք Նա մեզ վախ է բերում: Այն սեր է բերում, միացնում է բոլորիս: Ամե՛ն: Դա մեր մեջ սեր է դնում միմյանց հանդեպ: Դա բերում է Աստծո սերը, ո՛հ, մեզ միավորում է և Քրիստոսի Մարմինը բերում է միաբանության մեջ, որպես Հարս: Ահա թե ինչ է դա անում հիմա, ստեղծում է այս մեծ միությունը, որն Աստված...

112 Նրանք միավորում են. մի խումբն *այստեղ,* որ պատերազմի ուրիշի դեմ, մի խումբ *այստնեղ,* որ պատերազմի ուրիշի դեմ: Եկեղեցին կանգնած է նրանց միջև: Տեսնում եք, թե ինչ կլինի. նա էլ կմիանա նրանց: Դա լիովին ճիշտ է: Բայց այսօր մենք տեսնում ենք, որ դա վախ ու տագնապ է առաջացնում:

113 Բայց Եկեղեցին՝ Հարսը, միավորվում է մեկ Աստծո կողմից, մեկ Հոգով՝ Աստծո Հոգով, աստվածային մեկ սուրբ միության մեջ, որ ձևավորվի մեկ սուրբ Հարս Աստծո համար: Դա ճիշտ է, բոլորը, Հարսի միությունը: Մարմինը սպասում է որպես Հարս, քանի, քանը որ դա Հարսն է, քանի որ մենք մեզ Հարս ենք անվանում: Որովհետև Հարսի միավորման ժամանակ Եկեղեցին այնքան է համախմբվում: Դա մեր մեջ այնպիսի սեր պիտի առաջանցներ, որ մեզ համար պիտի դժվար լիներ իրարից հեռու լինելը: Դա ճիշտ է: Երբ դուք... կարիք չկա, որ մարդկանց խնդրեք, որ աղոթեն, որ Աստծուն երկրպագեն, կարիք չկա, որ նրանց ասեք, որ ճիշտ վարվեն: Նրանք այնքան են սիրում Աստծուն, որ ուրիշ ոչինչ կարևոր չէ նրանց համար:

114 Ի՞նչ եք կարծում փոքրիկ աղջկա, փոքրիկ գեղեցիկ աղջկա մասին, որը պատրաստվում է ամուսնանալ մի գեղեցիկ տղայի հետ, որին խենթի պես սիրահարված է: Դա իր համար ավելի կարևոր է, քան իր սեփական կյանքը,

և նա համոզված է, որ իրենք շուտով ամուսնանալու են: Երբ հարսանիքի օրը մոտենում է, այդ աղջնակը, ասում եմ ձեզ, ընդհանրապես չի կարող նստած նմալ: Հասկանո՞ւմ եք: Նա ամեն բան պատրաստում է: Լիովին նվիրվում է նրան: Դա ճիշտ է: Ձանում է ամեն բան անել նրան հաճելի լինելու համար: Այդպես պետք է անի եկեղեցին այսօր: Մեր կյանքն ամբողջովին պիտի թաքնված լինի Աստծո մեջ՝ Քրիստոսով, կնքված Նրա մեջ՝ Սուրբ Հոգով:

115 Այն, ինչ ես այստեղ ձեզ սովորեցիր, ցույց են տալիս նշանները և կատարվող տարբեր բանները: Բայց հիմա ժամանակ չունեմ շարունակելու: Ես դա կանեմ մեկ ուրիշ պատգամի մեջ, եթե Տերը կամենա: Մինչդեռ կա մի փոքրիկ բան, որ պակասում է Եկեղեցուն: Եվ մենք ուզում ենք դա, հասնել դրան և ես համարյա հասնում եմ դրան: Հասկանո՞ւմ եք: Մենք ուզում ենք հասնել դրան, եթե... պետք է դա անեք: Եթե դուք դա չանեք, վերջ, պետք է դա անեք: Որովհետև տեսնում ենք, որ միության ժամանակը մոտ է, որովհետև Աստված հավաքում է Եկեղեցին հափշտակության համար, որ տանի հարսանյաց հանդեսին, որտեղ լինելու է փառավոր միությունը: Երբ Աստված և մարդը հավիտյան կմիանան, երբ ժամանակավոր արարածը կմիանա Հավիտենականի հետ:

116 Մի անգամ դա կատարվեց երկրի վրա մարդու Որդու կերպարանքով: Նա Իր կյանքը տվեց, որ բերեր մի զորություն, այդ նույն Զորությամբ մյուս մարդկանց միավորելու և դարձնելու Հիսուս Քրիստոսի Հարսը: Եվ այժմ Եկեղեցին միավորում է Քրիստոսի Մարմնի հետ: Նա ազատված է, կտրված է ամեն մի փոքր կապանքից, նա պատրաստվում է, հավաքվում է, նրանց մեջ միություն կա, ո՛հ, սեր և ուրախություն, և Սուրբ Հոգին է գործում նրանց մեջ: Ո՛հ, Աստված իմ, ի՜նչ ժամանակ է:

117 Մենք տեսնում ենք, որ բադերը պատրաստվում են, սագերը պատրաստվում են, գազանները... մեղուները պատրաստվում են: Ամպերը պատրաստվում են, որ անձրև բերեն, տեսնում ենք, թե ինչպես է ամեն ինչ միավորվում մեծ մղման համար: Մենք տեսնում ենք Ազգերի Լիգան, երկրները միասին են, միավորում են կոմունիզմի մեջ: Նույն բանը տեսնում ենք նաև արևմտյան աշխարհում: Մենք տեսնում ենք նաև, որ միավորվում է եկեղեցին և բոլոր մյուս բաները: Բացարձակ անհնար էր, որ դա կատարվեր մեկ ուրիշ

ժամանակաշրջանում: Դա չէր կարող կատարվել քսան տարի առաջ, չէր կարող կատարվել: Նույնիսկ տասը տարի առաջ չէր կարող կատարվել, հիմա պետք է կատարվեր: Հասկանում եք, որովհետև այս «իզմ»-երը և նման բաները չէին հասել այս վիճակին:

118 Հիմա արթնացե՛ք: Արագ սթափվե՛ք և տեսե՛ք, թե ուր ենք հասել: Ո՞ւր ենք հասել: Մոգերի նման մենք ուղիղ շարք ենք կազմել Խոսքի հետ, և Տիրոջ Լույսը փայլում է մեր ճանապարհին: Փառք Աստծուն բարձունքներում, փառք Աստծուն, որ մեզ տվել է Հիսուս Քրիստոսին, ում սիրում ենք, և մեզ բերել է այստեղ: Եվ քանի որ մենք... Մենք Նրա ժողովուրդն ենք Նրա արյան գնով փրկագնված:

119 Ո՛հ, Աստված իմ: Երբ միության ժամանակը գա, որին ուղղում ենք մեր հայացքները, մենք կմիանանք Նրա Հոգու կապով, մենք... Արդյո՞ք դա Իր Հոգին է: Անկասկած, Իր Հոգին է: Ի՜նչ է Դա: Դա Իր Խոսքն է, և Նա... դա Խոսքի Հոգին է: Եվ երբ խոստմունքի Հոգին իջնում է ձեզ վրա, հաստատում է, արտահայտվում է այստեղ, դա նույն Հոգի՞ն է: Այդ Նա է, որ Մովսեի հետ անապատում էր: Այդ Նա էր, որ Հիսուս Քրիստոսի վրա էր: Այդ Նա հանդիպեց Սողոսին Դամասկոսի ճանապարհին: Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Եվ Նա անում է նույն բաները:

120 Եվ մենք տեսնում ենք, որ միավորվում են ազգերը, եկեղեցիների առաջնորդները, կոմունիզմը, «իզմ»-երը և բոլոր նման բաները, մյուս կողմից էլ տեսնում ենք, որ Հարսը միանում է Խոսքի հետ: Ո՛հ, Աստված իմ: Մենք ապրում ենք այն ժամանակում, երբ սուրբերը հարություն կառնեն, որ միանան ողջ եղողներին, որ բոլորը միասին միանան Հիսուս Քրիստոսի հետ հավիտյան:

121 Թող Աստված մեզ բոլորիս օգնի, որ այս երեկո միանանք Քրիստոսի հետ, որ հանձնենք այն ամենը, ինչ կանք և այն ամենը, ինչ ունենք, մեր ողջ անձը, մարմինը, միտքը Հիսուս Քրիստոսին, և սպասենք այդ միության ժամանակին:

> Երբ հնչե փողն Աստծո, և էլ ժամանակ չի լինի,
> Եվ կլինի հավերժ պայծառ առավոտ,
> Երբ Քրիստոսում ննջածները հարություն կառնեն և կհամախմբվեն այն կողմի ափում (Հարսի հետ, որ կենդանի է՝ միասին հափշտակվելու համար):

122 Նայե՛ք այդ միությանը: Աստված միացնում է Եկեղեցին Իր Խոսքի հետ, Խոսքը՝ Եկեղեցու հետ, որպեսզի երկուսն էլ մեկ դառնան. «Կասեք *մի բառ* և այն կկատարվի, *մի բան* կանեք, և կիրականանա: Դա այսպես է: Ես ձեր առջևից եմ գնում, ապացուցում եմ, որ ձեզ հետ եմ լինելու»: Լավ:

123 Մենք տեսնում ենք, որ մոտենում է այն ժամանակը, երբ կինչի փողը, և ննջած սուրբերը, նրանք չեն կարող կատարյալ դառնալ առանց մեզ. նրանք կախված են մեզանից (Եբրայեցիս 11), և երբ նրանք հավաքվեն, կմիանան ողջ եղողներին: Եկեղեցին միանում է Խոսքի հետ, Խոսքն ու Եկեղեցին միանում են, մեկ են դառնում: Մահացած սուրբերը միանում են ողջ եղող սուրբերին, որ մեկ լինեն: Հետո բոլորը միասին գնալու են Քրիստոսին միանալու Գառան հարսանիքի ընթրիքին:

124 Սա միավորման ժամանակն է, և նշանները դրսևորվում են ամենուր: Նշաններ ազգերի մեջ, կոմունիզմի մեջ, արևմտյան աշխարհում, նշանները Եկեղեցիների խորհուրդում: Եվ Նշանը հիմա այստեղ է Սուրբ Հոգու հովանու ներքո, և Աստծո Խոսքը հաստատում է, որ դա Ճշմարտություն է: Ամե՛ն: Սա միության ժամանակն է: Միության ժամանակի նշանը:

Խոնարհենք մեր գլուխները:

125 Տե՛ր Հիսուս, իմ տկար սիրտը ցնցում է ուրախությունից, երբ տեսնում եմ իմ հնարավորությունները՝ միջին տարիքի մարդ լինելով, բայց այնուամենայնիվ հնարավորություն ունեմ տեսնելու Քո գալուստը այս սերունդում, լինել ողջ և կանգնել այստեղ, տեսնել, երբ փողը կինչի. «Կեղտոտը թող ավելի կեղտոտվի, արդարը թող ավելի արդարանա և սուրբը թող ավելի սրբանա»: Ո՜հ, Տեր Աստված:

126 Մտածել միայն այդ մասին... մեկ ակնթարթում, երբ աշխարհը չի իմանա, թե ինչ է կատարվում, բայց հանկարծ դու կհայտնվես քո հեռացած սիրելիների առջև, որոնք եկել են քեզ հետ նորից միանալու: Եվ մեկ ակնթարթում կփոխվենք, մի ակնթարթում: Հետո բոլորս միասին կհափշտակվենք, որ դիմավորենք մեր Տիրոջն օդերում: Այդժամ կմիանանք Իր հետ հավիտյան և երբեք չենք հեռանա Իր ներկայությունից:

127 Ի՜նչ փառավոր է իմանալը, Տե՛ր, որ մենք միացած ենք մեկ Հոգով: Մեկ Հոգի՝ Սուրբ Հոգին, Իր Խոսքով

իջավ մեր մեջ: Ի՞նչ փառավոր է, ի՞նչ առանձնաշնորհում է զատված լինել աշխարհից և միանալ Հիսուս Քրիստոսի հետ: Միայն պատկերացնել, որ մի օր ֆիզիկական կերպարանքով, Իր փառավոր մարմնի նման մարմնով նստելու ենք հարսանիքի ընթրիքի սեղանին, և միանալու ենք Իր հետ ամուսնության կապով. կապրենք որպես Հարսն Իր Փեսայի հետ գալիք դարերում, հավիտենության մեջ:

128 Տե՛ր Աստված, թող սա մարդկանց համար չլինի երևակայական միտք, այլ այնքան իրական դառնա, որ նրանց մեջ անպիսի քաղց ու ծարավ առաջացնի, որ նրանք... թերթ են կարդում, նայում են... ռադիո և լուրեր են լսում, տեսնեն, որ եկել է միության ժամանակը: Նշաններն առկայծում են:

129 Տե՛ր Հիսուս, ինչպես խոսեցինք կանանց մասին, թե ինչ են անելու վերջին օրերում, թե ինչ է անելու եկեղեցին վերջին օրերում, ինչպիսին են լինելու եկեղեցու ժամանակաշրջանները, կնիքները, բոլոր այդ բաները; Եվ մենք տեսնում ենք, թե ինչպես էր Նոյի օրերում, թե ինչպես էր Սոդոմի և Ղովտի օրերում, երբ Աստծո հրեշտակը հայտնվեց մարդկային մարմնով, հորթի միս կերավ, կովի կաթ խմեց, հաց կերավ. հետո կանգնեց այնտեղ և կարողացավ ասել, թե ինչ էր կատարվում Իր հետևում: Հիսուսն ասաց, որ նույնը կլինի Մարդու Որդու գալստյան ժամանակ:

130 Տե՛ր Հիսուս, մենք տեսանք բուրգը, թե ինչպես նրանք կառուցեցին այնտեղ, և տեսանք, թե ինչպես ենք ավելացնում բոլոր այդ բաները. և տեսնում ենք, որ վերջին ժամանակներում ենք և սպասում ենք Անկյունաքարին: Փա՜ռք Աստծուն: Հա՛յր, խնդրում ենք, որ արագ արթնացնես մարդկանց և մեզ հավաքես, աստվածային սիրով և Հիսուս Քրիստոսի և միմյանց հանդեպ հարգանքով:

131 Եթե այստեղ այս երեկո կա մեկը, ով իր մեջ չունի այդ հույսը, չէի՞ք բարձացնի ձեր ձեռքն և ասի. «Տե՛ր Աստված, միացրո՛ւ ինձ Քեզ հետ, միացրո՛ւ ինձ Քեզ հետ»: Աստված օրհնի ձեզ, եղբայր: Աստված օրհնի ձեզ, ձեզ նույնպես, ձեզ էլ: Այո: «Միացրո՛ւ ինձ Քեզ հետ, Տե՛ր»: Այո՛: Ո՛հ, Աստված իմ:

Ազգերը սասանվում են, Իսրայելն արթնանում է:

132 Նայե՛ք Իսրայելին, նրանք միավորված են։ Իսրայելը, եկել են աշխարհի բոլոր ծայրերից, որ միավորվեն։ Նրանք միավորվում են և հիմա նրանք ազգ են։ Նրանք միացյալ ազգ են, ունեն իրենց դրոշը, փողը, բանակը և այլն։ Եթե երբևէ Իսրայելը միավորված է եղել, դա հիմա է։ Իսրայելը միավորվում է, Հռոմը միավորվում է, եկեղեցին միավորվում է։ Եկեղեցին էլ է միավորվում, ամեն. և մոտենում է այդ փառավոր Միությունը։ Ի՞նչ է սա։ Ամեն բան գնում է դեպի այդ Նշանը, այդ գլխավոր Նշանը, Հիսուսը և Իր Հարսը միավորվում են, որ մեկ լինեն։

133 Հա՛յր Աստված, շնորհի՛ր այս օրհնությունները, որոնք խնդրում եմ այս մարդկանց համար, և թող մենք մեկ լինենք Քեզ հետ մեր սրտում ու մեր հոգում, մինչ նրանք ձեռք են բարձրացնում՝ փափագելով դա։ Տե՛ր Աստված, մաքրի՛ր մեզ և դարձրու Քոնը. շնորհի՛ր դա, Տե՛ր։ Այն, ինչ մենք գիտենք և կարող ենք անել, դա խնդրելն է։ Բացի այդ, Դու ասացիր, որ եթե մենք խնդրենք և հավատանք դրան, կստանանք։ Ես ակնկալում եմ դա, Տե՛ր։ Ես գոհանում եմ Քեզանից Հիսուս Քրիստոսի Անունով։ Ամեն։

Սիրում եմ Նրան, սիրում եմ Նրան,
Քանզի նախ Ինքն ինձ սիրեց,
Եվ Գողգոթայի խաչի վրա
Իմ Փրկությունը գնեց։

Ամեն։ Ո՛հ, Աստված իմ։

Ահա Փեսան գալիս է.
Կեսգիշերային աղաղակն եմ լսում,
Եթե պատրաստ ենք, շուտով կբարձրանանք
Դիմավորելու Նրան օդերում։

Արթուն մնա և աղոթիր, իմ եղբայր,
Որ ոչ ոք չառնի քո պսակը,
Որովհետև գաղջն ու ուրացողը
Հարսանյաց զգեստ չեն հագնելու։

134 Դա ճիշտ է։ Եկե՛ք պատրաստվենք այս կեսգիշերային աղաղակի համար։ Այն կհնչի այն ժամին, որ չեք մտածում։ Աղաղակ է հնչելու, բայց ոչ անհավատների աշխարհում. դա գաղտնիք է լինելու։ Բայց ձեզ՝ հավատացյալներիդ, ովքեր սպասում են սրան։ Տեսնո՞ւմ եք, որ աստղերը մեկ շարք են կազմում։ Տեսնո՞ւմ եք։ Ի՞նչ է դրանից լինելու։

Հենց այն, ինչ սկզբում է եղել: Տեսե՛ք, թե ուր ենք հասել. նշանները հայտնվում են:

Մենք տեսնում ենք Նրա օրհնյալ գալստյան նշանները.
Ահա, թզենու տերևները կանաչել են,
Արքայության Ավետարանն է ազգերին քարոզվում,
Արդեն մոտեցել ենք, վերջն է երևում:

Դրա համար ուրախությամբ հռչակում ենք Նրա օրհնյալ գալստյան պատգամը:

135 Մի՞թե դա ճիշտ չէ: Ո՛հ «Հռչակել Նրա օրհնյալ գալստյան պատգամը»: Ահա թե ինչ մենք պետք է անենք: Բոլորին ասել. «Պատրաստվե՛ք, պատրաստվե՛ք Աստծուն դիմավորելու»: Ամե՛ն: Ես սիրում եմ Նրան: Ո՛հ, որքա՜ն եմ սիրում Նրան: Հիմա, եկե՛ք կանգնենք: Մինչ հրավիրում ենք միմյանց, պարզեք և սեղմեք ինչ–որ մեկը ձեռքը և ասեք.

Մինչ նորից հանդիպենք:

Միմյանց ձեռք սեղմեք:

... մինչ նորից հանդիպենք:
Մինչ նորից հանդիպենք Հիսուսի ոտքերի մոտ,
Մինչ...

Հիշե՛ք, որ կարող եք կանչվել, և մեր հաջորդ հանդիպումը կարող է լինել Իր ոտքերի մոտ:

Ո՛հ, թող Տերը ձեզ հետ լինի, մինչև մեր հաջորդ հանդիպումը:

136 Մտածե՛ք դրա մասին, մինչ նորից հանդիպենք. մինչև մեր հաջորդ հավաքույթը կիրակի առավոտյան կամ չորեքշաբթի երեկոյան, կարող է... առաջին բանը, որ կիմանաք այն է, որ ինչ–որ մեկն անհետացել է: Այս մարդն անհետացել է, նրանք չկան: Ո՛հ, մտածե՛ք. եթե ձեր ամուսինն անհետանա կամ ձեր կինը, կամ, կամ Ջանի կինը, կամ, կամ, կամ այստեղ երեխաները: Ամեն բան կատարվել է (ի՞նչ կատարված կլիներ), ուրեմն դուք մնացել եք:

Ո՛հ, ինչ ողբ ու աղաղակ էր հնչում,
Երբ կորսվածների բաժինը դարձավ հայտնի,

Աղաղակեցին սարերին ու բլուրներին (Ինչպես Իսրայելը, որ վերադառնում էր քաղաք, գնում տաճար)։
Աղոթեցին, բայց աղոթքն ուշացած էր (նրանք մերժել են պատգամը)։

137 Ո՛հ, եղբայր, ոչ մի դեպքում դա չանես։ Ինչ էլ անելու լինես, քաջաբար մնա քո դիրքում։ Այո՛, պարո՛ն։

138 Իսկ մինչև մեր հաջորդ հանդիպումը, այսպես ենք անելու.

Առ քեզ հետ Հիսուսի Անունը
Իբր ասպար փորձություն
Մրմնջե զայն աղոթքովդ (Ի՞նչ եք անում)
Թակարդներ երբ շուրջ պատեն։

Ո՛հ, անգին քաղցր անուն
Հույս երկրի, ցնծումն երկնից,
Ո՛հ, անգին քաղցր անուն
Հույս երկրի, ցնցումն երկնից։

139 Այժմ խոնարհենք մեր գլուխները և կիսաձայն երգենք.

Այս անվամբ նաև երկնից մեջ
Զինք պիտ Արքայից Արքա
Պսակենք այդ կարճ կյանքե վերջ,
Երբ ուղին մեր վերջանա (մի օր դա կկատարվի)։

Ո՛հ, անգին քաղցր անուն (անգին անուն)։

Մինչ մեր հաջորդ հանդիպումը թող Տերը ձեզ հետ լինի։

Հույս երկրի, ցնցումն երկնից,
Ո՛հ, անգին քաղցր անուն (Որքա՜ն քաղցր է)։
Հույս երկրի, ցնծումն երկնից։

63-0818 Միության ժամանակն ու նշանը
Բրանհամի Խորան
Ջեֆերսոնվիլ, Ինդիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org